



Իրավաբանական
Մեթոդաբանություն
Առևտրի և Արհեստագործական
Սեկտորի ՀԿ



Ժողովրդավարության
զարգացման
հիմնադրամ

Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմնահարցերը

2024

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել ժողովրդավարության զարգացման հիմնադրամի օժանդակության շնորհիվ «Արդարացի դատաիրավական բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում: Չեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել ժողովրդավարության զարգացման հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

Չեկույցի հեղինակներն են Հասմիկ Հարությունյանը և Դիանա Հարությունյանը:
Խմբագիր՝ Արաքս Մելքոնյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	4
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	5
1. ԴԻՏԱՐԿՎԱԾ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ	6
1.1 Կարգապահական վարույթը հարուցելու առիթները	7
1.2 Կարգապահական վարույթ հարուցող մարմինը	8
1.3 Վարույթ հարուցելու հիմքերը.....	9
1.4 Միջնորդությամբ բարձրացված ենթադրյալ խախտման հակիրճ նկարագրությունը	10
1.5 Էական կարգապահական խախտման որակում	23
1.6 Վարույթի հարուցման փուլում դատավորի իրավունքների ապահովումը.....	23
1.7 Կարգապահական վարույթ հարուցելու ժամկետները	24
1.8 Ուսումնասիրության տևողությունը վարույթ հարուցող մարմնի կողմից	26
2. ՎԱՐՈՒՅԹԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ	26
2.1 Վարույթի տեսողությունը և նիստերի քանակը ԲԴԽ-ում	26
2.2 Դատավորների բացատրությունները ԲԴԽ-ում քննության ընթացքում.....	27
2.3 Խորհրդին ներկայացված միջնորդությունները.....	28
2.4 Վարույթի հրապարակայնությունը ԲԴԽ-ում.....	29
3. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ	32
3.1 ԲԴԽ որոշման հիմնավորվածությունը	34
3.2 Կիրառված կարգապահական տույժի տեսակները	39
3.3 Բարձրագույն դատական խորհրդի անդամի կողմից հատուկ կարծիքի ներկայացում	41
ԵԶՐԱՅԱՆԳՈՒՄՆԵՐ	42
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	43

ՆԱԽԱԲԱՆ

Կարևորելով դատական իշխանության անկախությունն ու արդյունավետ գործունեությունը՝ «Իրավունքների պաշտպանությունն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից 2023 թվականին շարունակվել է դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթների և կայացված որոշումների մշտադիտարկումը՝ նպատակ ունենալով վեր հանել ինչպես օրենսդրական կարգավորումների դեռևս առկա, այնպես էլ պրակտիկայի խնդիրներն ու առանձնահատկությունները: Համանման ուսումնասիրությունն կազմակերպության կողմից իրականացվում է 2019 թվականից ի վեր:

Ձեկույցում ամփոփված են Բարձրագույն դատական խորհրդի կողմից 2023թ. հունվարից հունիս ամիսների ընթացքում քննված վարույթների մշտադիտարկման ու կայացված որոշումների ուսումնասիրության արդյունքները¹:

Կազմակերպության կողմից դիտարկվել են Բարձրագույն դատական խորհրդի կողմից նշված ժամանակահատվածում քննված բոլոր 14 վարույթները, որոնց վերաբերյալ որոշումները կայացվել են հունվարին՝ թվով 6 որոշումներ, մարտ ամսին կայացվել է մեկ որոշում, մնացյալ ամիսներին՝ երկուական:

Արձանագրված խնդիրները հնարավոր է եղել վեր հանել ինչպես դիտարկված վարույթներից, այնպես էլ Բարձրագույն դատական խորհրդի կայացրած որոշումների ուսումնասիրությունից: Ըստ այդմ, զեկույցում տեղ գտած խնդիրների առնչությամբ ներկայացվում են նաև համապատասխան առաջարկություններ:

¹ Որոշումները, որոնք ուսումնասիրվել են, ներառում են մինչև 2023թ. հուլիսի 3-ը հրապարակված որոշումները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի առաջին վեց ամիսների կարգապահական պատասխանատվության վարույթների ուսումնասիրության շրջանակներում տեղեկության հավաքագրումը կատարվել է երկու հիմնական եղանակով՝ Բարձրագույն դատական խորհրդում տեղի ունեցած վարույթների մշտադիտարկմամբ և հրապարակված որոշումների ուսումնասիրությամբ:

Մշտադիտարկում. կազմակերպության ներկայացուցչի կողմից նշված ժամանակահատվածում մշտադիտարկվել են 14 վարույթներով տեղի ունեցած բոլոր դռնբաց 42 նիստերը, որոնց ընթացքում հավաքագրվել են ուսումնասիրության համար անհրաժեշտ և վարույթների քննությանը վերաբերող տեղեկությունները:

Որոշումների ուսումնասիրություն. Կազմակերպության կողմից ուսումնասիրվել և վերլուծվել են 33 դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակված խորհրդի կողմից դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումները: Որոշումների վերլուծության համար կազմակերպության կողմից օգտագործվել են իր կողմից մշակված և արդեն իսկ գործարկված ինչպես քանակական, այնպես էլ որակական մեթոդներ: Մասնավորապես, կարգապահական պատասխանատվության վարույթների մշտադիտարկման և խորհրդի որոշումների ուսումնասիրության արդյունքում դուրս բերված տվյալները ներբեռվել են պատրաստված կիսաձևայնացված հարցաշարում: Վերջինս ներառել է մի շարք թեմատիկ բաժիններ, որտեղ տեղ են գտել դետալացված հարցադրումներ: Հարցաշարի ձևայնացված հատվածներում տվյալները մուտքագրվել են նախօրոք մշակված կողերով: Կիսաձևայնացված հատվածներում որոշումներից դուրս են բերվել տեքստային բնույթի ամբողջական մեջբերումներ: Առանձնացվել է նաև կարգապահական վարույթի յուրաքանչյուր փուլին վերաբերելի գործողությունների վերաբերյալ տվյալները, կայացվող որոշումների հիմնավորումներն ու հիմքերը: Ուսումնասիրությամբ իրականացվել է դուրս բերված տեղեկությունների համադրում՝ քանակական տվյալներ ստանալու

նպատակով: Ինչ վերաբերում է տեքստային բնույթի տեղեկություններին, ապա դրանք ենթարկվել են որակական վերլուծության՝ ըստ դատավորի կողմից կարգապահական խախտում դիտարկված կամ չդիտարկված գործողության նկարագրության, յուրաքանչյուր խախտման վերաբերյալ դատավորի բացատրության, կարգապահական խախտման վերաբերյալ ԲԴԽ կողմից տրված գնահատականի:

Առանձին հարցերով տեղեկություն ստանալու նպատակով նաև հարցումներ են իրականացվել հորհրդին կամ դատական դեպարտամենտին:

1. ԴԻՏԱՐԿՎԱԾ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Մշտադիտարկված և ուսումնասիրված 14 վարույթներով ներգրավված են եղել 17 դատավորներ: Դրանցից գերակշիռ մասում՝ 12 վարույթով, դատավորները հանդիսացել են արական սեռի ներկայացուցիչներ (15 դատավոր), 2 վարույթով ներգրավված են եղել իգական սեռի երկու դատավորներ (վարույթներից մեկը հարուցված է եղել 4 դատավորի նկատմամբ):

Դիտարկված բոլոր վարույթներից կեսի պարագայում՝ 7 գործով, կարգապահական վարույթ հարուցված է եղել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում պաշտոնավարող դատավորներիի նկատմամբ: Մյուս 6 գործերով ներգրավված դատավորները պաշտոնավարել են, համապատասխանաբար հետևյալ դատարաններում՝ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանում, Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում, Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում, Վերաքննիչ քաղաքացիական դատարանում և Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատում: Իսկ ուսումնասիրված գործերից մեկով վարույթը հարուցված է եղել 4 դատավորի նկատմամբ, ովքեր պաշտոնավարել են Սևանկության դատարանում, Վերաքննիչ քաղաքացիական դատարանում և երկուսը՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատում:

Աղյուսակ 1. Կարգապահական վարույթով ներգրավված դատավորների թիվը՝ ըստ դատարանների

Դատարան	Դատավորների թիվը
Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան	7

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ	3
Վերաքննիչ քաղաքացիական դատարան	2
Սնանկության դատարան	1
Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան	1
Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան	1
Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան	1
Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան	1

Նախկինում դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու վերաբերյալ ուսումնասիրությամբ վեր հանված պատկերը հետևյալն է՝

- Վեց վարույթներով ներգրավված դատավորները նախկինում կարգապահական պատասխանատվության չեն ենթարկվել,
- Մեկ դատավոր վերջին տարվա ընթացքում ստացել է նկատողություն կարգապահական պատասխանատվության տեսակը²,
- Մեկ դատավոր վերջին երկու տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կարգապահական պատասխանատվության տեսակը³,
- Մյուս վեց վարույթներով նիստերի դիտարկումից և որոշումների ուսումնասիրությունից պարզ չի եղել՝ արդյոք դատավորները նախկինում կարգապահական պատասխանատվության ենթարկվել են, թե ոչ:

1.1 Կարգապահական վարույթը հարուցելու առիթները

Ուսումնասիրված 14 վարույթներից 6-ի պարագայում վարույթ հարուցելու առիթ հանդիսացել է անձի դիմումը, որից չորսը ներկայացվել է գործով ներգրավված փաստաբանների կողմից, երկուսը քաղաքացիների: 3-ի դեպքում՝ պետական և տեղական մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումը: Ընդ որում, երեք հաղորդումներն էլ ներկայացված են եղել Գլխավոր դատախազի կողմից:

² Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-20-Ո-Կ-7 որոշում:

³ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-20-Ո-Կ-9 որոշում:

Երկուական դեպքում վարույթի հարուցման առիթ է հանդիսացել վարույթ հարուցող մարմնի կողմից իր լիազորություններն իրականացնելիս կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի ինքնուրույն հայտնաբերումն ու համապատասխանաբար վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող արարքի հայտնաբերումը: Մեկ դեպքում հարուցման առիթ է հանդիսացել զանգվածային լրատվության միջոցի հրապարակումը:

Աղյուսակ 2: Կարգապահական վարույթ հարուցելու առիթները.


Վարույթ հարուցելու առիթը	Վարույթների քանակը
Անձի դիմումը	6
Պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումը	3
Վարույթ հարուցող մարմնի կողմից իր լիազորություններն իրականացնելիս խախտման հատկանիշներ պարունակող արարքի ինքնուրույն հայտնաբերումը	2
Վարույթ հարուցող մարմնի կողմից ՄԻԵԴ ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը	2
Զանգվածային լրատվամիջոցների հրապարակումը	1

1.2 Կարգապահական վարույթ հարուցող մարմինը

Ուսումնասիրված վարույթների գերակշիռ մասը՝ թվով 12 գործ կամ վարույթների 85%-ը, հարուցվել է Արդարադատության նախարարի կողմից, մնացյալ երկուսը՝ Դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կողմից: Ուսումնասիրության իրականացման

Ժամանակահատվածում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կամ ԲԴԽ հանձնախմբի կողմից վարույթի հարուցման դեպք չի արձանագրվել:

Վարույթներ թիվը՝ ըստ հարուցած մարմնի




1.3 Վարույթ հարուցելու հիմքերը

Հարուցված վարույթների հիմքերի մեջ առավել մեծ թիվ են կազմել դատավարական նորմի խախտման հիմքով վարույթները, որը մի շարք դեպքերում ներառել է նաև վարքագծի կանոնի խախտում:

Ուսումնասիրված 14 վարույթներից 4-ը հարուցվել է բացառապես դատավարական նորմի խախտման հիմքով, 4-ը՝ դատավարական նորմի և դատավորի վարքագծի կանոնի խախտման հիմքով, 2-ը՝ վարքագծի կանոնի խախտման, 2-ը՝ նյութական նորմի խախտման, և 2-ը՝ նյութական ու դատավարական նորմերի խախտման հիմքով:

Վարույթների թիվը՝ ըստ հարուցման հիմքերի



- զատավարական նորմի խախտում
- զատավարական նորմի և զատավորի վարքագծի կանոնի խախտում
- վարքագծի կանոնի խախտում
- նյութական նորմի խախտում
- նյութական ու զատավարական նորմի խախտում

1.4 Միջնորդությամբ բարձրացված ենթադրյալ խախտման հակիրճ նկարագրությունը

Միջնորդություն ներկայացնելու իրավասություն ունեցող մարմինների կողմից Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացված միջնորդություններով բարձրացվել են տարբեր բնույթի խախտումներ, որոնց մեջ առանձնակի ուշադրության արժանի են հատկապես զատավարական ժամկետների խախտման դեպքերը: Մասնավորապես՝

1. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից հարուցված վարույթներից մեկով զատավորը դատական ակտը կայացրել է զատավարական ժամկետների ակնհայտ և տևական խախտմամբ՝ օրենքով սահմանված ժամկետից շուրջ 9 ամիս անց: Որոշումը հրապարակվել է 2022 թվականի սեպտեմբերի 15-ին, օրենքով սահմանված ժամկետից 1 տարի 1 ամիս հետո, իսկ կողմերին ուղարկվել է 2022 թվականի սեպտեմբերի 16-ին⁴:

2. Համաձայն վարույթ հարուցող մարմնի՝ դատարանը գործով կայացրած թվով 3 որոշումների հիման վրա կազմված կատարողական թերթերը կողմին տրամադրել է օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ, իսկ դատարանի մեկ այլ որոշման հիման վրա կազմված կատարողական թերթը տրվել է որոշումը կայացնելուն հաջորդող 57-րդ օրը, այն դեպքում, երբ անհապաղ կատարման

⁴ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-1-Ո-Կ-2 որոշում:

ենթակա դատական ակտի հարկադիր կատարման համար կատարողական թերթը տրվում է անհապաղ⁵: Գործով դատարանի կողմից կայացված որոշման շրջանակներում հակընդդեմ պատասխանողին արգելվել է երեխային դուրս բերել ԶՅ-ից: Մինչդեռ կատարողական թերթը դատավորի կողմից ուշացումով տրամադրելու հետևանքով հակընդդեմ հայցվորն այլևս զրկված է եղել երեխայի հետ տեսակցելու, շփվելու, վերջինիս դաստիարակությանը, խնամքի և կրթության հոգածության հարցերին մասնակցելու հնարավորությունից: Դատավորի կողմից թույլ տրված խախտումն առաջացրել է անդառնալի հետևանք, քանի որ դրա խախտման հետևանքով երեխան լքել է ԶՅ տարածքը, արդյունքում՝ միջանկյալ դատական ակտը մնալով անկատար:

3. Դատավարական ժամկետների ենթադրյալ խախտման հիմքով մեկ այլ գործով աշխատանքային վեճով գործի քննությունը և լուծումը դատավորի կողմից իրականացվել է օրենքով սահմանված ժամկետից ավելի քան մեկ տարի 8 ամիս անց, գործով եզրափակիչ դատական ակտը հրապարակվել է օրենքով սահմանված ժամկետից ավելի քան մեկ տարի անց, եզրափակիչ դատական ակտի օրինակը հայցվորին և պատասխանողին տրամադրվել է օրենքով սահմանված ժամկետից ավելի քան մեկ տարի անց⁶:

4. Դատավարական ժամկետների խախտմանը վերաբերող մեկ այլ գործով՝ ըստ վարույթի նյութերի, Դատարանը, գործի քննությունը հայտարարելով ավարտված, վճռի հրապարակման օր է նշանակել 24.11.2021 թվականը: Գործի նյութերում առկա է 24.11.2021 թվականի ամսաթվով թվագրված վճիռը, որն այնուամենայնիվ, Դատարանի կողմից դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվել է միայն 05.02.2023 թվականին, այսինքն՝ հայտարարված ամսաթվից ավելի քան 1 տարի 2 ամիս անց⁷:

5. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից հարուցված մյուս վարույթով միջնորդությամբ բարձրացվել է մեկից ավելի խախտման հարց: Ըստ հարուցող մարմնի դիրքորոշման՝ վերաքննիչ բողոք բերելու սուբյեկտ հանդիսանալու հարցի գնահատումը դատարանը պարտավոր էր իրականացնել բողոքի ընդունման փուլում: Սկզբում դատարանը գտել է, որ անձը իրավունք ուներ բողոք բերել, սակայն հետագայում այդ մոտեցումը փոխել է: Մյուս ենթադրյալ խախտումը վերաբերում էր վերաքննիչ բողոք բերելու իրավունքի կարգավորումներին, առ այն, որ անձը կարող է վերաքննիչ բողոք ներկայացնել դատական ակտի՝ միայն իր համար անբարենպաստ մասի դեմ, բացառությամբ

⁵ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-48-Ո-Կ-15 որոշում:

⁶ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-20-Ո-Կ-7 որոշում:

⁷ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-48-Ո-Կ-13 որոշում:

օրենքով նախատեսված դեպքերի: Ըստ վարույթ հարուցող մարմնի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը ընդգրկված է օրենքով սահմանված բացառությունների մեջ, երբ կողմերից յուրաքանչյուրը կարող է բողոքարկել այն՝ անկախ դատական ակտի բարենպաստ կամ անբարենպաստ լինելու հանգամանքից: Տվյալ պարագայում դատավորը վարույթը կասեցնելու մասին որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը նախ ընդունել է վարույթ, ապա մերժել, գտնելով, որ որոշումը բողոքաբերի համար հանդիսանում է բարենպաստ դատական ակտ և բողոքաբերն ի սկզբանե չունեի այն բողոքարկելու իրավունք: Մինչդեռ դա պետք է քննարկվեր բողոքը վարույթ ընդունելու փուլում:

Վարույթ հարուցող մարմինը գտել է նաև, որ դատական ակտի եզրափակիչ մասը միջնորդությունը բավարարելու մասին եզրահանգում չի պարունակում և ունի հետևյալ բովանդակությունը՝ Կասեցնել քաղաքացիական գործի վարույթը՝ մինչև թիվ ԵԴ/220059/02/21 քաղաքացիական գործող եզրափակիչ դատական ակտ կայացնելը: Հանձնաժողովը գտել է, որ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածը առհասարակ կիրառելի չէր⁸: Ավելին, կասեցումից հետո դատավորը չի պատճառաբանել վարույթի վերսկսումը:

6. Մեկ այլ վարույթով, ըստ վարույթ հարուցող մարմնի՝ Դատարանի կողմից փաստաթղթերը պատասխանողին ուղարկվել են օրենքով սահմանված կարգի խախտմամբ, որի արդյունքում վերջինս հայցադիմումի պատասխան ներկայացնելով, արդեն իսկ ակնկալել է նախնական դատական նիստի նշանակում: Ավելին, Դատարանի կողմից խախտվել է նաև հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման կատարման մասին պատշաճ ապացույցի առկայության պայմաններում փաստաթղթերը գործով պատասխանողներին ուղարկելու համար սահմանված եռօրյա ժամկետը: Մասնավորապես, դատարանի կողմից 2020 թվականի մարտի 24-ին կայացվել են հայցադիմումը վարույթ ընդունելու մասին և հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումներ: Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման հիման վրա դրա կատարման համար Էլեկտրոնային (ԱրմԼեքս) համակարգի միջոցով Դատարանի կողմից 2020 թվականի ապրիլի 13-ին ճառայություն են ուղարկվել թիվ ԿԹ-261512-2020 և թիվ ԿԹ-261528-2020 կատարողական թերթերը: Թիվ 261528 կատարողական թերթով 2020 թվականի ապրիլի 16-ին հարուցված թիվ 06073361 կատարողական վարույթով ճառայության կողմից 2021 թվականի հուլիսի 2-ին կայացվել է կատարողական վարույթն ավարտելու մասին որոշում, որն Էլեկտրոնային համակարգի միջոցով 2021 թվականի հուլիսի 8-ին ուղարկվել է Դատավորին: Դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 3-

⁸ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-1-Ո-Կ-1 որոշում:

րո՞ մասի կանոններով առաջնորդվելու դեպքում, հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, գործում առկա հայցադիմումի օրինակը և դրան կից փաստաթղթերը կարող էր գործով պատասխանողներին ուղարկել 2021 թվականի հունիսի 8-ից հետո միայն, դրան հաջորդող եռօրյա ժամկետում, այն է՝ մինչև 2021 թվականի հունիսի 13-ը ներառյալ: Սակայն Դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, հայցադիմումի օրինակը և դրան կից փաստաթղթերը հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի և ժամկետի վերաբերյալ պարզաբանմամբ Պատասխանողի ներկայացուցչին են ուղարկվել ավելի վաղ՝ դեռևս 2020 թվականի մայիսի 27-ին: Դատարանի կողմից օրենքով սահմանված կարգի խախտմամբ Փաստաթղթերի ուղարկումը Պատասխանողի համար առաջացրել է հայցադիմումի պատասխան ներկայացնելու հնարավորություն, և Պատասխանողը, ստանալով հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, իրացրել է հայցադիմումի պատասխան ներկայացնելու իր իրավունքը: Չնայած այն հանգամանքին, որ Պատասխանողի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշման ստացմամբ վերջինիս համար ստեղծել է հայցադիմումի պատասխան ներկայացնելու կարծեցյալ իրավական հիմքը և Պատասխանողի ներկայացուցչի կողմից դրան հաջորդող երկշաբաթյա ժամկետում ներկայացվել է հայցադիմումի պատասխան՝ նշվածը չի կարող վկայել այն մասին, որ Գործով հայցադիմումի պատասխանը ներկայացված է օրենքով սահմանված կարգով: Միաժամանակ, որպես այդպիսին այն չի կարող նախապայման հանդիսանալ հետագա դատավարական ընթացակարգերի համար, քանի որ, հակառակ պարագայում, Դատարանը, 2020 թվականի հունիսի 29-ին ստանալով հայցադիմումի պատասխանը, դրան հաջորդող եռօրյա ժամկետում պետք է կայացներ նախնական դատական նիստ նշանակելու մասին որոշում և այդ որոշման կայացմանը հաջորդող երեսօրյա ժամկետում հրավիրեր նախնական դատական նիստ, մինչդեռ նշված ժամանակահատվածում Դատարանի կողմից այդպիսի որոշում չի կայացվել⁹:

7. Մեկ այլ գործով վարույթի հարուցման հիմք ներկայացվել է այն, որ դատավորի կողմից թույլ են տրվել քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի և 118-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերում ամրագրված պահանջների խախտումներ: Վարույթ հարուցող մարմինն ընդգծել է, որ Դատարանի կողմից անհիմն և չպատճառաբանված դատական ակտ կայացնելու հետևանքով մեղադրյալը հայտնվել է ազատության մեջ, այդ ընթացքում կրկին թաքնվել է քննությունից, և ձեռնարկված միջոցառումներով նրա գտնվելու վայրը չի պարզվել: Միաժամանակ նշել է, որ դատավորի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմերի խախտումները նվազեցնում են հանրության վստահությունն

⁹ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-1-Ո-Կ-5 որոշում:

արդարադատության և դրա արդյունավետության նկատմամբ և այդպիսով հեղինակագրկում դատական իշխանությունը¹⁰:

8. Կարգապահական վարույթի հիմք է հանդիսացել այն, որ դատավորը կիրառված համաձայնեցման վարույթի շրջանակներում մեղադրյալին նշանակել է պատիժ ազատազրկման տեսքով 5 ամիս ժամկետով: Նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով՝ սահմանել է փորձաշրջան՝ 1 տարի 6 ամիս ժամկետով, ինչպես նաև մյուս քրեական գործով մեղադրյալներին մեղավոր ճանաչելով՝ որպես պատիժ նշանակել է ազատազրկումը և նշանակված պատիժը պայմանակորեն չկիրառելով՝ սահմանել է փորձաշրջան 1 տարի 6 ամիս ժամկետով: Ըստ վարույթ հարուցող մարմնի, դատավորի կողմից թույլ տրված խախտումները դրսևորվել են նրանում, որ դատարանն իրավագոր չէր նշանակել ազատազրկումը՝ որպես պատիժ, քանի որ գործերով մեղադրյալներն առաջին անգամ էին ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարել և նրանց նկատմամբ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտեր առկա չեն եղել, հետևաբար գործել է օրենսդրության հետադարձ ուժ ունենալու կանոնը: Ինչպես նաև դատարանն իրավագոր չի եղել հաստատելու համաձայնության մասին արձանագրությունները, քանի որ համաձայնության արդյունքով սահմանվող պատիժը չի համապատասխանել քրեական օրենքի ընդհանուր մասի վերաբերելի դրույթներին: Նման պայմաններում դատարանը պարտավոր էր սահմանել առավելագույնը տասնհինգօրյա ժամկետ՝ նոր արձանագրություն կազմելու և դատարան ներկայացնելու համար¹¹:

9. Համաձայնության վարույթին առնչվող մեկ այլ գործով դատարանը մեղադրյալին մեղավոր ճանաչելով հանցագործության կատարման մեջ նշանակել է պատիժ ազատազրկման ձևով և նշանակված պատիժը չկիրառելով նշանակել է փորձաշրջան, սակայն տվյալ դեպքում դատարանն իրավագոր չի եղել նշանակել նշված պատժատեսակը, քանի որ մեղադրյալն առաջին անգամ էր ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարել և նրա նկատմամբ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտ առկա չի եղել: Մասնավորապես, Քրեական դատավարության օրենսգրքի համաձայն մեղադրական դատավճիռը պարունակում է համաձայնության մասին արձանագրության տեքստի բառացի շարադրանքը, սակայն Դատարանն իրավունք չունեի հաստատելու համաձայնության մասին արձանագրությունը, քանի որ համաձայնության արդյունքում սահմանվող պատիժը չի համապատասխանել Քրեական օրենսգրքի ընդհանուր մասի վերաբերելի դրույթներին: Նման պայմաններում դատարանը պարտավոր էր սահմանել առավելագույնը տասնհինգօրյա ժամկետ՝ նոր

¹⁰ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-1-Ո-Կ-6 որոշում:

¹¹ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-20-Ո-Կ-8 որոշում:

արձանագրությունը կազմելու և դատարան ներկայացնելու համար, սակայն դատարանն ընդունել է համաձայնության վերաբերյալ արձանագրությունը և կազմել մեղադրական դատավճիռ՝ նշանակելով պատիժ ազատազրկում 6 ամիս ժամկետով, որը պայմանականորեն չի կիրառել՝ սահմանելով փորձաշրջան 1 տարի ժամկետով¹²:

10. Հարուցված վարույթներից երկուսի հիմք հանդիսացել է դատավորի հրապարակայնորեն արտահայտված կարծիքը: Մասնավորապես, դատավորը հրապարակային կարծիք է հայտնել դատարանում քննվող գործի վերաբերյալ: Ըստ վարույթ հարուցող մարմնի՝ դատավորը որոշման եզրափակիչ մասին հրապարակումից հետո հրապարակայնորեն կասկածի տակ է առել տվյալ դատական ակտը և դատարանի գործողությունները¹³: Մասնավորապես, դատավորը մեկ այլ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի առնչությամբ իր գնահատականներն է արտահայտել՝ մատնացույց անելով դատավորի ծանրաբեռնվածության մակարդակը և նրան վերագրվող խախտումը՝ 4 գործով վճիռը տևական ժամանակ ուշացնելու վերաբերյալ: Ըստ վարույթ հարուցող մարմնի՝ գնահատականների առկայությունն օբյեկտիվ և անաչառ դիտորդի աչքերում ստեղծում է կարծիք՝ դատավորին վերագրվող կարգապահական խախտման անհամաձայնության և գործընթացի անարդար որակելու վերաբերյալ, ինչի մասին է վկայում նաև «Yerevan.today» լրատվական կայքի կողմից հրապարակմանը տրված վերնագիրն առ այն, որ երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Չարուհի Նախշբարյանը ֆեյսբուքյան իր էջում ահազանգել է դատավոր Աննա Փիլոսյանի վարույթով հնարավոր անարդար վճռի մասին, ինչի արդյունքում դատավորն իր կատարած հրապարակմամբ կասկածի տակ է դրել նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացի արդար իրականացումը:

Դատավորը հարցի առնչությամբ բացի Facebook սոցիալական կայքում իր հրապարակումից, հարցազրույցներ է տվել նաև «Pastinfo.am», «irakanum.am» լրատվական կայքերին և կրկին կարծիք է հայտնել կայացված դատական ակտի վերաբերյալ: Դատավորը առանձնացրել է պատասխանատվության ենթարկված դատավորի լիազորությունները դադարեցնելու՝ որպես կարգապահական տույժի տեսակ նշանակելուն կողմ քվեարկած խորհրդի անդամներին մնացյալից՝ ընդգծելով նրանց՝ իրենց կայացրած որոշման հետ ապրելու պարտականությունը:

¹² Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-48-Ո-Կ-14 որոշում:

¹³ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-20-Ո-Կ-9 որոշում:

Դատավորը ներկայացրել է իր կարծիքը, որ տվյալ որոշումը չէր կարող կայացվել այն պարագայում, երբ առկա է դատարանների գերծանրաբեռնվածություն, հիմք ընդունելով այդ որոշումը՝ դատավորը գնահատականներ է տվել պետության կողմից իր պոզիտիվ պարտականությունը չկատարելու փոխարեն անհատ դատավորներին կարգապահական տույժի ենթարկելու մասին, և Խորհրդի որոշումը գնահատել է որպես անակնկալ որոշում և խնդրահարույց համաչափության տեսանկյունից:

11. Դատավորի կողմից արտահայտված հրապարակային կարծիքին վերաբերող մյուս վարույթով, մասնավորապես, լիազոր մարմնի կողմից նշվել է, որ դատավորը հրապարակային կարծիք է արտահայտել այն մասին, որ Խորհրդի անդամներն իրենց որոշումները կայացնելիս անկախ և անաչառ չեն՝ կաշկանդված լինելով որոշակի ուղղորդումներով կամ ցուցումներով: Ըստ վարույթ հարուցող մարմնի՝ դատավորը հարցազրույցին նախորդած վերջին վեց ամսվա ընթացքում 20-ից ավելի դատավորների, այդ թվում դատավորներ Աննա Փիլոսյանի, Սուրեն Անտոնյանի, Ալեքսեյ Սուբոյանի և Չարուհի Նախչբարյանի լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու վերաբերյալ Խորհրդի դատական ակտերն անօրինական է բնորոշել, ինչի իրավունքը չունեն¹⁴:

12. Հաջորդ գործով վարույթի հարուցման հիմքում դրվել է ՄԻԵԴ որոշմամբ արձանագրված խախտման հանգամանքը: Վարույթ հարուցող մարմինը բարձրացրել է այն հանգամանքը, որ դատարանը 12.04.2007 թվականի որոշում է կայացրել վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին՝ այդ ժամանակ գործող օրենսգրքով նախատեսված բողոքը վարույթ ընդունելու հիմքերի բացակայության պատճառաբանությամբ՝ միաժամանակ փաստելով բողոքի թերությունները վերացնելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար ժամկետի սահմանման աննպատակահարմարությունը: Այնուամենայնիվ, նույն գործով նույն կողմի վերստին ներկայացված բողոքի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն արդեն մեկ այլ՝ 01.10.2007 թվականի որոշմամբ, չնայած բողոքը վերադարձնելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշման առկայությունը, վարույթ է ընդունել բողոքը և արդյունքում բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտը¹⁵:

13. ՄԻԵԴ որոշմամբ արձանագրած խախտման հիմքով հարուցված վարույթներից մյուսով առիթ է հանդիսացել 2010 թվականի մարտի 19-ին «Շուլց ԱԳ» գերմանական կորպորացիայի՝ ՄԻԵԴ ներկայացրած գանգատի հիման վրա հարուցված ՄԻԵԴ

¹⁴ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-57-Ո-Կ-16 որոշում:

¹⁵ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-1-Ո-Կ-4 որոշում:

2019 թվականի որոշումը, որով արձանագրվել է կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին կետի խախտումը¹⁶:

Մասնավորապես, գործի փաստական տվյալների համաձայն՝ «Ա. Սաֆարյան և ընկերներ» ՀԶ ՍՊԸ և «SCHOLZ AG» միջև կնքված 08.11.2002 թվականի պարտավորագիրը և 28.10.2005 թվականին կնքված համաձայնագրերը, որոնց հիման վրա հայց է ներկայացվել դատարան, չեն պարունակել արբիտրաժային համաձայնություն՝ ի տարբերություն կողմերի միջև 08.02.1999 թվականին, 10.04.2000 թվականին և 02.04.2003 թվականին կնքված պայմանագրերի (այսուհետ միասին նաև՝ Պայմանագրեր): Կողմերի միջև կնքված Պայմանագրերի առարկան է հանդիսացել վաճառողի կողմից համապատասխանաբար 50.000, 120.000 և 12.000 տոննա սև մետաղի ջարդոնի մատակարարումը գևորդին: Պայմանագրերի 7.2-րդ կետով նախատեսված արբիտրաժային համաձայնությամբ ամրագրվել է պայմանագրի կատարումից բխող ցանկացած վեճի՝ արբիտրաժային տրիբունալի քննությանը ենթակա լինելու պայմանը: Արդյունքում՝ խնդրո առարկա գործի շրջանակներում վեճի՝ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային դատարանի քննությանը ենթակա լինել- չլինելու հարցը դիտարկելիս, դատարանը պետք է պարզեր առաջացած վեճի՝ պայմանագրի կատարումից բխելու հանգամանքը:

Մինչդեռ Դատավորները նշված հանգամանքներից պատշաճ ուշադրություն չեն դարձրել: Արդյունքում, ՄԻԵԴ-ը նույնպես չտեսնելով որևէ, նույնիսկ անուղղակի փոխկապակցվածություն մի կողմից պարտավորագրի և համաձայնագրերի, մյուս կողմից՝ Պայմանագրերի միջև արձանագրել է, որ «(...) դժվար է հասկանալ, թե ինչպես դիմումատու ընկերության՝ միայն վարկին վերաբերող հայցը կարող էր դիտարկվել որպես բոլորը միասին վերցված՝ 1999 թվականի փետրվարի 8-ի, 2000 թվականի ապրիլի 10-ի և 2003 թվականի ապրիլի 2-ի պայմանագրերի մաս այն դեպքում, երբ Վարչական շրջանի դատարանում որևէ ձևով նույնիսկ հղում չի կատարվել վերոնշյալ պայմանագրերին (...)»:

14. Ուսումնասիրված վերջին գործով վարույթի հարուցման հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ քաղաքացիական գործով ներկայացված դիմումը չի բավարարել երեխա որդեգրելու վերաբերյալ դիմումին պարտադիր կցվող փաստաթղթերին ներկայացվող օրենսդրական պահանջը, սակայն դատավորը երեխային որդեգրելու համար անհրաժեշտ օրենսդրական պայմանների բացակայությամբ չհիմնավորված և չպատճառաբանված վճիռ է կայացրել, այդ թվում՝ վճռով ամուսնության մեջ չգտնվող անձի կողմից որդեգրած երեխայի հոր ազգանվան հետ


¹⁶ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-57-Ո-Կ-17 որոշում:

կապված հարցի լուծմամբ, թույլ տալով նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ¹⁷:

Կարելի է նկատել, որ հարուցված վարույթների մեջ կրկնվող հանդիսացել են ժամկետների խախտման հիմքով գործերը (4 վարույթ), երկուական գործեր վերաբերել են դատավորների կողմից արտահայտած հրապարակային կարծիքին և քննադատությանը, համաձայնեցման վարույթին առնչվող և ՄԻԵԴ որոշմամբ դատավորների կողմից թույլ տրված խախտումներին:

Ինչ վերաբերում է հարուցված վարույթներով դատավորների դրսևորած մեղքի ձևին, ապա 14 վարույթներից 9-ի պարագայում այն որակվել է որպես կոպիտ անփութությամբ կատարված, վարույթներից 5-ի պարագայում՝ դիտավորությամբ:

Վարույթները՝ ըստ մեղքի ձևի



Վարույթը հարուցող մարմնի կողմից անփութության որակումը կատարվել է Դատական օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի հիման վրա, ինչպես նաև հիմք ընդունելով գործի փաստական հանգամանքների ուսումնասիրությունն ու կատարված իրավական վերլուծությունները, որը թույլ է տվել եզրահանգել, որ դատավորի կողմից դատավարական իրավունքի նորմերի խախտումը կատարվել է մեղավորությամբ, որը դրսևորվել է կոպիտ անփութությամբ: Նման դեպքերում հաշվի է առնվել նաև հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում դատավորի կողմից իրեն վերագրվող խախտման հանգամանքների և

¹⁷ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-1-ՈՎ-Կ-3 որոշում:

պատճառների, խախտման իրավական գնահատականի վերաբերյալ բացատրությամբ ներկայացված փաստարկները, ինչպես նաև վարույթ հարուցած մարմնի կողմից խախտումները դիտավորությամբ կատարելու մասով ապացուցված չլինելու հանգամանքը: Նման մոտեցում նկատվել է հատկապես դատավարական ժամկետների խախտման հիմքով հարուցված վարույթներով:

Մի շարք վարույթների պարագայում մեղքի ձևի որակումը կատարվել է գործի փաստերի համատեքստում: Օրինակ, վարույթ հարուցող մարմինը, անդրադառնալով մեղքի ձևին և վկայակոչելով Դատական օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին, 5-րդ մասերը, նշել է, որ վարույթի փաստական հանգամանքների, կատարված իրավական վերլուծության և դատավորի կողմից ներկայացված գրավոր բացատրության համադրման արդյունքում հանգել է այն հետևության, որ դատավորի կողմից նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումը կատարվել է մեղավորությամբ, որը դրսևորվել է կոպիտ անփութությամբ, քանի որ դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը՝ երեխա որդեգրելու վերաբերյալ դիմումը վերադարձնելու հիմքի առկայությամբ դիմումը վարույթ ընդունելը, երեխա որդեգրելու հիմքերի բացակայությամբ երեխայի որդեգրումը հաստատելը, միաժամանակ չպատճառաբանված, չհիմնավորված վճիռ կայացնելը, երեխա որդեգրելու վերաբերյալ վճռով որդեգրած երեխայի հոր ազգանվան հարցերը կարգավորելը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր ապահովել դիմումը վարույթ ընդունելու փուլի սահմանները, դատական ակտի օրինականության, հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջը¹⁸:

Մեկ այլ գործով լիազոր մարմինը, նշել է, որ հարուցված կարգապահական վարույթի փաստերի և կատարված իրավական վերլուծության համադրման արդյունքում, դատավորի կողմից դատավարական իրավունքի նորմերի խախտումները կատարվել են դիտավորությամբ, քանի որ ցանկացած հարցի վերաբերյալ կարծիք արտահայտելու փաստը (այդ թվում՝ կայացված դատական ակտի իրավաչափությունը կասկածի տակ դնելը) ինքնին ենթադրում է անձի սուբյեկտիվ, գնահատողական վերաբերմունքի արտացոլում այս կամ այն հանգամանքի վերաբերյալ: Միաժամանակ, դատավորն իր ներկայացրած բացատրությամբ ըստ էության արձանագրել է, որ նման վարքագծի դրսևորումն իր գիտակցված գործողությունների արդյունքն է և պայմանավորված է իր՝ ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների իրացմամբ: Հետևաբար, վերոգրյալի արդյունքում դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ

¹⁸ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-1-Ո-Կ-3 որոշում:

բնույթը և վարքագծի կանոնների խախտումները կատարվել են դիտավորությամբ¹⁹:

Համանման մեկ այլ վարույթի ամօրյալում լիազոր մարմինը կրկին արձանագրել է, որ դատավորի կողմից դատավարական իրավունքի նորմերի խախտումները կատարվել են դիտավորությամբ, քանի որ ցանկացած հարցի վերաբերյալ կարծիք արտահայտելու փաստը ինքնին ենթադրում է անձի սուբյեկտիվ գնահատողական վերաբերմունքի արտացոլում այս կամ այն հանգամանքի վերաբերյալ, կարծիքի արտահայտումը չի կարող դրսևորվել անձի՝ իր արտահայտած խոսքով սուկ փաստերի շարադրանքի և այդ փաստերի ամօրյալում սուբյեկտիվ ընկալման արտահայտման միջև տարբերակման սահմանագիծը չգիտակցելու եղանակով: Ըստ վարույթ հարուցող մարմնի՝ դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը և վարքագծի կանոնների խախտումները կատարվել են դիտավորությամբ²⁰:

Ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ բոլոր այն դեպքերում, երբ վարույթի հարուցումը ներառել է վարքագծի կանոնների խախտում, ապա խախտումը համարվել է կոպիտ, ինչպես վերոնշյալ դեպքերում:

Ուսումնասիրված վարույթների մեջ առանձնակի կարևորություն են ներկայացրել նաև դատավարական նորմի խախտման որակումները:

Որպես այդպիսին՝ դիտարկված 14 վարույթներից չորսը վերաբերել են դատավարական ժամկետների խախտումներին: Օրինակ, մեկ գործով որպես դատավարական նորմի խախտում է դիտարկվել դատավորի կողմից օրենքով սահմանված ժամկետից 9 ամիս ուշացմամբ կատարողական թերթ տալն ու այնուհետ այն 1 տարի ուշացումով հրապարակելը և կողմերին ուղարկելը: Ընդ որում, այս խախտումը վարույթ հարուցող մարմնի՝ Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կողմից որակվել է որպես դիտավորությամբ կատարված, քանի որ ըստ հարուցող մարմնի, դատավորը լիովին գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ լինելը և այդ փաստը հաստատվել է նաև դատավորի ներկայացրած բացատրության մեջ արտացոլված դիրքորոշումներով, որտեղ վերջինս նշել է իր արարքի նվազ կարևորություն ունենալու մասին²¹:

Դատավարական ժամկետների խախտմանը վերաբերող մեկ այլ գործով դատավարական նորմի խախտում որակվել է աշխատանքային վեճի վերաբերյալ դատական գործով դատարանի կողմից վեճի քննության օրենքով սահմանված ժամկետի խախտումը: Մասնավորապես, օրենքով սահմանված եռամսյա ժամկետը

¹⁹ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-20-Ո-Կ-9 որոշում:

²⁰ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ- 57-Ո-Կ-16 որոշում:

²¹ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-1-Ո-Կ-2 որոշում:

չի պահպանվել, այլ գործը քննվել է ավելի քան 1 տարի 8 ամիս: Սույն գործով վարույթը հարուցած լիազոր մարմինը դատավորի կողմից դատավարական նորմերի խախտումը կատարելը որակվել է կոպիտ անփութությամբ կատարված: Նման որակման համար հաշվի է առնվել նաև հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում դատավորի կողմից իրեն վերագրվող խախտման հանգամանքների և պատճառների, խախտման իրավական գնահատականի վերաբերյալ բացատրությամբ ներկայացված փաստարկները, ինչպես նաև վարույթ հարուցած մարմնի կողմից խախտումները դիտավորությամբ կատարելու մասով ապացուցված չլինելու հանգամանքը: Վարույթ հարուցող մարմինը եզրահանգել է, որ դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր կատարել օրենսդրությամբ սահմանված ժամկետում գործը քննելու և լուծելու, վճիռը հրապարակելու և գործին մասնակցող անձանց ուղարկելու դատավարական պարտականությունները²²:

Դատավարական ժամկետների խախտման առնչությամբ մեկ այլ գործով ևս վարույթ հարուցող մարմինը խախտումը որակել է որպես դատավարական նորմի խախտում, ինչը դրսևորվել է թվով 3 որոշումների հիման վրա կատարողական թերթերը կողմին օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ուղարկելով²³: Վարույթ հարուցող մարմինը նշել է, որ հիմք ընդունելով դատավորի կողմից ներկայացված բացատրությունը և կատարված արարքի իրավական վերլուծությունը, հանգել է այն եզրահանգման, որ դատավորի կողմից դատավարական իրավունքի նորմերի խախտումը կատարվել է մեղավորությամբ, որը դրսևորվել է կոպիտ անփութությամբ, քանի որ դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

Այս դեպքում, սակայն, վարույթ հարուցող մարմինը՝ արդարադատության նախարարը, եզրահանգել է նաև որ անփութությամբ դատավարական նորմերի խախտումներ կատարելու հետ միաժամանակ վերջինս կոպիտ անփութությամբ թույլ է տվել նաև դատավորի վարքագծի կանոնների խախտում՝ ի պաշտոնե գործելիս առանց արդարադատության շահերին վնասելու՝ ողջամիտ ժամկետում չքննելով և չլուծելով իր իրավասությանը վերապահված հարցերը և ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում զերծ չմնալով դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց²⁴:

²² Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-20-Ո-Կ-7 որոշում:

²³ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-48-Ո-Կ-15 որոշում:

²⁴ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-48-Ո-Կ-15 որոշում:

Դատավարական նորմի խախտում որակված դատավարական ժամկետի խախտման մեկ այլ գործով վարույթ հարուցող մարմինը որպես հարուցման հիմք ներկայացրել է այն հանգամանքը, որ դատարանը գործի քննությունը հայտարարելով ավարտված վճռի հրապարակման օր է նշանակել 24.11.2021թվականը, որը կայացվել է այդ օրը, սակայն հրապարակվել միայն 05.02.2023 թվականին, այսինքն 1 տարի 2 ամիս անց, իսկ կողմին ուղարկվել 1 տարի 3 ամիս ուշացումով: Վարույթ հարուցող մարմինը եզրահանգել է նաև, որ դատավարական նորմի նման խախտումը կատարվել է մեղավորությամբ, ինչը դրսևորվել է կոպիտ անփութությամբ, քանի որ դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրավիճակում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ դատավարական ժամկետների պահպանմամբ իր վրա դրված պարտականությունները կատարելու համար՝ չգիտակցելով նաև, որ իր աշխատակազմի թերացումների կամ անգործության համար պատասխանատվություն է կրում հենց ինքը²⁵:

Նշված գործով նույնպես վարույթ հարուցող մարմինը եզրահանգել է նաև, որ դատավորի կողմից կոպիտ անփութությամբ դատավարական նորմերի խախտումներ կատարելու հետ միաժամանակ վերջինս կոպիտ անփութությամբ թույլ է տվել նաև դատավորի վարքագծի կանոնների խախտում:

Խոսելով վարույթի ընթացքում վարույթ հարուցող մարմնի կողմից միջնորդությամբ բարձրացված պահանջի առանձնահատկությունների մասին՝ պետք է նշել, որ այս մասով տեղեկություն ստանալ չի հաջողվել, քանի որ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունները հրապարակային չեն, և միջնորդությունների հիմնական բովանդակությանը՝ հարուցման հիմքերին ու առիթներին հնարավոր է եղել ծանոթանալ բացառապես ԲԴԽ վերջնական որոշմամբ: Այլ կարևոր հարցեր, ինչպիսիք են վարույթ հարուցող մարմնի կողմից տեղական կամ պետական մարմիններից նյութեր պահանջելու և ստանալու կամ մերժում ստանալու օրինակները, քննարկվող քրեական, քաղաքացիական կամ վարչական գործի նյութերի ուսումնասիրության առանձնահատկությունները և վերհանումները, և այլ հանգամանքներ հասանելի չեն եղել:

²⁵ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-48-Ո-Կ-13 որոշում:

1.5 Էական կարգապահական խախտման որակում

Ուսումնասիրված 14 վարույթներից 5-ի պարագայում վարույթը հարուցող մարմնի կողմից հարուցված միջնորդությամբ խախտումը որակվել է որպես էական և հանգեցրել լիազորությունների դադարեցման: Մասնավորապես, այդպիսի որակում դատական օրենսգրքի կարգավորումների հիման վրա ստացել են՝

- Մեկ խիստ նկատողություն ունեցող դատավորի կողմից կարգապահական խախտում կրկին կատարելը, ինչի հիմքում ընկած է եղել դատավորի կողմից հնչեցված հրապարակային կարծիքը,
- Երկու գործով դատավորների կողմից այնպիսի արարք կատարելը, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ, ինչի առիթ հանդիսացել է ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող ՄԻԵԴ գործով վճռի ուսումնասիրությունն ու դրա արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը,
- Դատավորի կողմից այնպիսի արարք կատարելը, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ, ինչի հիմքում դրվել է երեխայի որդեգրման գործով դատավորի կողմից դրսևորած այնպիսի վարքագիծը, որն անխուսափելիորեն հեղինակագրկում է դատական իշխանությունը, Էապես նվազեցնում է դատական իշխանության նկատմամբ հանրության վստահությունը և վնասում դատավորի բարձր պաշտոնը:
- Դատավորի կողմից այնպիսի արարք կատարելը, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ, մասնավորապես այն հիմքով, որ դատավորն իր կողմից կատարված հրապարակային արտահայտություններով կասկածի տակ է դրել խորհրդի անկախությունը և անաչառությունը, հետևաբար, դատավորի նման վարքագիծը ոչ միայն վարկաբեկում է դատական իշխանությունը, այլև իր կատարման հանգամանքներով պայմանավորված՝ համատեղելի չէ դատավորի կարգավիճակի հետ:

1.6 Վարույթի հարուցման փուլում դատավորի իրավունքների ապահովումը

Չնայած կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությունները ամբողջությամբ հասանելի չեն եղել և վարույթի հարուցումը ինքնին հրապարակային չէ, այնուհանդերձ, ուսումնասիրությամբ փորձ է արվել նաև պարզել այդ փուլում դատավորների ընթացակարգային իրավունքների ապահովման հարցը:

Ուսումնասիրված 14 վարույթներից 12-ի պարագայում դատավորները վարույթի քննության փուլում վարույթ հարուցող մարմնին են ներկայացրել բացատրություն, և գրեթե բոլոր դեպքերում միջնորդել են կարճել կարգապահական վարույթը: Ընդհանուր առմամբ այս փուլում դատավորների ընթացակարգային իրավունքները ապահովվել են:

Մեկ գործով դատավորը հրապարակային կարծիք արտահայտելու համար հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ լիազոր մարմնին է ներկայացրել գրություն՝ բարձրացնելով պարզաբանելու ենթակա հետևյալ հարցերը՝

- *Վարույթի ենթադրյալ խախտման հիմքն ու բովանդակությունը, մասնավորապես, թե ով է սղագրել հարցազրույցը, նյութը,*
- *Վարույթի հեղինակն ինչից է ենթադրել, թե դատավորը կասկածի տակ է դրել չորս դատավորի վերաբերյալ խորհրդի դատական ակտերը,*
- *Դատավորի, թե այլ անձանց խոսքերից է վարկաբեկվել խորհուրդը, ինչով է վտանգում դատական իշխանության հեղինակությունը ու նվազում հանրության վստահությունը դատական իշխանության նկատմամբ ու վերաբերելի խոսքերի հեղինակների հնչեցրած ու գործողություններ կատարած նախորդ անձանց հրապարակային խոսքն ու գործողություններն ուսումնասիրվել է նախարարության կողմից, թե ոչ²⁶:*

ՄԻԵԴ որոշումներով արձանագրված խախտումների հիմքով հարուցված վարույթներով դատավորները նախարարին ներկայացրած բացատրությամբ բարձրացրել են ինչպես անձի իրավական վիճակը վատթարացնող իրավական ակտի հետադարձության ուժի մերժման սկզբունքը, այնպես էլ Սահմանադրությանը հակասելու հանգամանքը, ավելին, ներկայացվել է նաև առաջարկ դատական օրենսգրքում կատարել փոփոխություն՝ ՄԻԵԴ վճռի հիման վրա կարգապահական վարույթ հարուցելու առիթն օրենսգրքից հանելու համար²⁷:

1.7 Կարգապահական վարույթ հարուցելու ժամկետները

Ուսումնասիրված բոլոր վարույթներով Դատական օրենսգրքով սահմանված վարույթ հարուցելու ժամկետները պահպանվել են: Այնուհանդերձ, առանձին գործերով արձանագրվել են վարույթ հարուցելու ժամկետների հետ կապված

²⁶ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-57-Ո-Կ-16 որոշում:

²⁷ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-1-Ո-Կ-4 և ԲԴԽ-105-Ո-Կ-26 որոշումներ:

առանձնահատկություններ, որոնք հատուկ շեշտադրվել են նաև դատավորների կողմից և ներկայացվել որպես վարույթի կարճման հիմք:

Բարձրացված հարցերը կրկին վերաբերել են ՄԻԵԴ կողմից արձանագրված խախտման հիմքով հարուցված վարույթների ժամկետներին: Մասնավորապես, դատավորը նշել է, որ Դատական օրենսգրքով սահմանված փոփոխությունը հակասում է ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածին, այն է՝ 2022 թվականին ընդունվել է դատավորի իրավական վիճակը վատթարացնող՝ նրա նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու նոր առիթ սահմանող օրենք, որին նույն օրենքով տրվել է հետադարձ ուժ: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ ներկայացված միջնորդության պահանջը վերաբերում է դատավորի 01.10.2007 թվականին կատարած խախտման համար պատասխանատվության ենթարկելուն, իսկ այդ կապակցությամբ կարգապահական վարույթն էլ հարուցվել է ենթադրյալ խախտման օրվանից ավելի քան 15 տարի անց՝ 30.11.2022 թվականին: Մինչև 06.07.2022 թվականին կատարված փոփոխությունն ու լրացումն օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով արդարադատություն կամ որպես դատարան օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական և դատավարական իրավունքի նորմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտման հիմքով կարգապահական վարույթ չէր կարող հարուցվել, եթե եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել էր 8 տարի, այսինքն՝ նման խախտման համար պատասխանատվության ենթարկելու ժամկետը երկարացվել է յոթ տարով:

Դատավարական ժամկետների խախտման հիմքով հարուցված մեկ գործով դատավորը վարույթ հարուցող մարմնին ներկայացված բացատրությամբ ներկայացրել է նաև, որ ենթադրյալ խախտման պահից անցել է 1 տարի, ուստի որոշումը կայացնելիս արդեն իսկ լրացել էր դատավորի վարքագծի կանոնների խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ժամկետը: Հատկանշական է, որ դատավորին պատասխանատվության ենթարկելու որոշման մեջ հորիզոնորդ անդրադարձել է դատավորի նշված փաստարկին և վարույթ հարուցող մարմնի կողմից տրված պատասխան հիմնավորմանը, ինչը, սակայն, որոշումից անհասկանալի է: Մասնավորապես, ԲԴԽ որոշմամբ բարձրացված փաստարկն ու հակափաստարկը ներկայացված է հետևյալ կերպ՝ *«Անդրադառնալով Դատավորի կողմից բացատրությամբ ներկայացված դիրքորոշմանն առ այն, որ Դատավորին վերագրվող դատավորի վարքագծի կանոնների խախտման պահից անցել է 1 տարի, ուստի որոշումը կայացնելիս արդեն իսկ լրացել էր դատավորի վարքագծի կանոնների խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ժամկետը՝ նախարարը նշել է, որ*

Խորհուրդն իր 24.11.2022 թվականի թիվ ԲԴԽ-105-Ո-Կ-25 որոշման շրջանակներում քննելով Դատավորի կողմից՝ կարգապահական վարույթի ընթացքի համար Օրենսգրքով սահմանված ժամկետները խախտված լինելու հիմքով ներկայացված կարգապահական վարույթը կարծելու վերաբերյալ միջնորդությանը»²⁸:

Կարելի է արձանագրել, որ նման կարևոր հարցադրման առնչությամբ Խորհրդի որոշմամբ տրված բացատրությունը ոչ միայն կիսատ է և բավարար չէ, այլ խոսում է նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Խորհրդի որոշման կառուցվածքի ու հիմնավորումների նկատմամբ ցուցաբերած ոչ հետևողականության ու ջանասիրության բացի մասին:

1.8 Ուսումնասիրության տևողությունը վարույթ հարուցող մարմնի կողմից

Դատական օրենսգրքով սահմանված է, որ հարուցված կարգապահական վարույթի տևողությունը մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելը չի կարող երկու ամսից ավելի լինել²⁹: Ուսումնասիրված բոլոր գործերով արձանագրվել է օրենսգրքով սահմանված երկամսյա ժամկետի պահպանում՝ ըստ աշխատանքային օրերի:

2. ՎԱՐՈՒՅԹԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ

2.1 Վարույթի տևողությունը և նիստերի քանակը ԲԴԽ-ում

Ըստ Դատական օրենսգրքի կարգավորումների՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դատական խորհուրդը քննում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունն ստանալու պահից եռամսյա ժամկետում³⁰:

²⁸ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-20-Ո-Կ-7 որոշում, էջ 8, երկրորդ պարբերություն

²⁹ ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 147:

³⁰ ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 150:

Ուսումնասիրված բոլոր գործերով վարույթի տևողությունը համապատասխանել է օրենքով սահմանված վերոնշյալ պահանջին: Վարույթի առավել կարճ տևողությունը եղել է 15 աշխատանքային օր, առավել երկարը՝ 44:

Յուրաքանչյուր վարույթով Բարձրագույն դատական խորհրդում վարույթի տևողությունը և նիստերի քանակը տարբեր է եղել:

Ուսումնասիրված 14 վարույթներից 8-ի պարագայում կայացված նիստերի քանակը, ներառյալ՝ խորհրդի որոշման հրապարակման նիստը, 2-ն է, 2-ի պարագայում՝ 3, 3 գործով՝ երեքական նիստ, որոնցից բոլոր դեպքերում մեկ նիստ չի կայացել, մեկ գործով նիստերի քանակը եղել է 4:

Խորհրդի չկայացած նիստերը հետաձգվել են առանց նիստը բացելու, որևէ այլ տեղեկություն նիստը չկայանալու պատճառների վերաբերյալ, սակայն, հասանելի չէ, ոչ մշտադիտարկման արդյունքներով, ոչ խորհրդի որոշման ուսումնասիրությունից:

Ուսումնասիրված վարույթների ընթացքում գործերի մեծամասնության պարագայում, այն է՝ 14 վարույթից 8-ի պարագայում դատավորները հանդես եկել փաստաբանի մասնակցությամբ, մնացյալ 6 վարույթներով՝ հանդես են եկել առանց փաստաբանի: Ընդ որում, մեկ վարույթով ներգրավված 4 դատավորներից երկուսն են ներկայացված եղել փաստաբանի կողմից, մեկը հանդես է եկել առանց փաստաբանի, չորրորդ դատավորը չի մասնակցել վարույթին՝ ներկայացնելով հրաժարականի դիմում:

Ուսումնասիրված բոլոր գործերով նիստերին մասնակցել են նաև վարույթ հարուցող մարմնի ներկայացուցիչները՝ առանձին դեպքերում մեկից ավելի ներկայացուցիչներով:

2.2 Դատավորների բացատրությունները ԲԴԽ-ում քննության ընթացքում

2 գործով ներկայացված բացատրությամբ դատավորները չեն վիճարկել խախտման փաստի առկայությունը³¹, մնացյալ գործերով դատավորները վիճարկել են խախտման փաստը: Դատավարական ժամկետների խախտման հիմքով հարուցված բոլոր գործերով, ի թիվս այլնի, դատավորները բացատրությամբ բարձրացրել են գերծանրաբեռնվածության հարցը, ինչը ազդել է օրենքով սահմանված ժամկետներում գործը քննելու և ավարտելու վրա: Միջազգային ատյանի կայացրած որոշման հիման վրա արձանագրված խախտման հիմքով

³¹ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-20-Ո-Կ-7 և ԲԴԽ-20-Ո-Կ-8 որոշումներ:

հարուցված վարույթների առնչությամբ դատավորները ներկայացված բացատրությամբ նշել են անձի իրավական վիճակը վատթարացնող նորմին հետադարձ ուժ տալու անընդունելիությունը և, ըստ այդմ, հարուցված վարույթը կարճելու անհրաժեշտությունը:

Իրենց իրավունքների ապահովման համար վարույթին մասնակից դատավորները ոչ միայն ներկայացրել են բացատրություններ, այլև հնարավորություն են ունեցել հարցեր տալ ելույթ ունեցողներին, ինչը արձանագրվել է ուսումնասիրված 14 վարույթից 11-ով: Նմանապես, 9 վարույթով դատավորները ներկայացրել են նաև առարկություններ:

Պետք է արձանագրել նաև, որ մեկ գործով խորհրդի կողմից նիստը դռնփակ անցկացնելու միջնորդության մի մասը քննարկվել է առանց դատավորի մասնակցության և վերջինս ամբողջությամբ չի լսել միջնորդության հիմքերն ու հիմնավորումները³²: Ավելին, նիստի ընթացքում դատավորը ցանկացել է հայտարարություն կատարել, սակայն խորհուրդը թույլ չի տվել, նշելով, որ արդեն իսկ կա նիստը վարելու սահմանված ընթացակարգային հերթականություն: Հայտարարությունը հետագայում կատարվել է, թե ոչ, հնարավոր չի եղել դիտարկել, քանի որ քննությունը շարունակվել է դռնփակ³³:

2.3 խորհրդին ներկայացված միջնորդությունները

Խորհրդում վարույթի քննության ընթացքում 14 գործից 7-ի պարագայում դատավորների կողմից ներկայացվել են նաև միջնորդություններ:

Ներկայացված միջնորդություններից մեկով դատավորը, հաշվի առնելով գործի առանձնահատկություններն ու երեխայի որդեգրման հետ կապված հարցերը, խնդրել է քննությունն անցկացնել դռնփակ³⁴: Խորհուրդը, քննարկելով միջնորդությունը, որոշում է կայացրել այն բավարարել:

Երկու գործով դատավորի կողմից բացարկի միջնորդություն է ներկայացվել խորհրդի նախագահին՝ հաշվի առնելով Արդարադատության նախարարի հետ

³² Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-57-Ո-Կ-16 որոշում:

³³ Դավիթ Հարությունյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդության նիստը ԲԴԽ-ում. <https://www.youtube.com/watch?v=jQcytTjFn0>

³⁴ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-1-Ո-Կ-3 որոշում:

ուևեցած գործընկերային հարաբերությունները, երկու դեպքում էլ միջնորդությունները մերժվել են, առանց բովանդակային հիմնավորման³⁵:

Երեք գործով դատավորները առանձին միջնորդություն են ներկայացրել հարուցված վարույթը կարճելու վերաբերյալ: Մեկ դեպքում միջնորդության հիմքում եղել է այն հանգամանքը, որ դատավորը ծանրաբեռնված է եղել և թույլ տրված խախտումը որևէ բացասական հետևանք չի առաջացրել³⁶: Ներկայացված միջնորդությունը բավարարվել է և խորհուրդը որոշում է կայացրել կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժել՝ խախտման նվազ կարևորության հիմքով: Նմանատիպ մյուս գործով ներկայացված միջնորդությամբ կրկին դատավորը խնդրել է կարճել վարույթը՝ նշելով, որ թույլ տրված ժամկետների խախտումները կատարվել են իր աշխատակազմի կողմից³⁷: Խորհուրդը դատավորի միջնորդությունը մերժել է, և վերջինիս հայտարարվել է նկատողություն: Մյուս գործով վարույթը կարճելու դատավորի միջնորդության հիմքում եղել է այն, որ առկա է շահերի բախում խորհրդի նախագահի և վարույթ հարուցող մարմնի՝ Արդարադատության նախարարի միջև³⁸: Միջնորդությունը խորհրդի կողմից մերժվել է:

Ներկայացված մեկ այլ միջնորդությամբ դատավորը խնդրել է վարույթն անցկացնել իր բացակայությամբ, քանի որ գտնվում է մարզում և ունի նշանակված նիստեր, բացի այդ խնդրել է միավորել իր դեմ հարուցված երկու վարույթները, ինչը խորհրդի կողմից բավարարվել է³⁹:

2.4 Վարույթի հրապարակայնությունը ԲԴԽ-ում

Դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործերի քննությանն առնչվող կարևոր հարցերից է վարույթների հրապարակայնությունը: Վերջինս հնարավորություն է տալիս հանրությանն ու լրատվական միջոցներին տեղեկություն ստանալ դատավորի կողմից կատարված ենթադրյալ խախտման բնույթի ու տեսակի, ինչպես նաև գործընթացի ու հնարավոր պատասխանատվության միջոցի օրինականության մասին:

³⁵ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-1-Ո-Կ-4, ԲԴԽ-57-Ո-Կ-17 որոշումներ:

³⁶ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-48-Ո-Կ-15 որոշում:

³⁷ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-48-Ո-Կ-13 որոշում:

³⁸ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-20-Ո-Կ-9 որոշում:

³⁹ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-20-Ո-Կ-8 որոշում:

Ուսումնասիրված 14 վարույթներից 12-ը անց են կացվել հրապարակային, մյուս երկուսը՝ դռնփակ: Դռնփակ անցկացված վարույթներից մեկը եղել է երեխայի որդեգրման գործով թույլ տրված ենթադրյալ խախտման հիման վրա, որտեղ հաշվի առնելով գործի առանձնահատկությունները՝ վարույթը եղել է ոչ հրապարակային⁴⁰:

Դռնփակ անցկացված մյուս գործի հիմքում եղել է դատավորի կողմից հնչեցված հրապարակային կարծիքը, որով վերջինս կասկածի տակ է դրել խորհրդի կողմից վերջին շրջանում դատավորների լիազորությունները դադարեցնելու օրինականությունը և անդրադարձել այդ շրջանի խորհրդի գործունեությանը⁴¹: Ինչպես պարզ է դարձել նիստի դիտարկումից՝ դռնփակ անցկացնելու նպատակը եղել է դատական իշխանության հեղինակության պաշտպանությունն ու հանրության աչքերում վարկաբեկելը կանխելը: Խորհուրդը, կայացված վերջնական որոշմամբ անդրադառնալով այս հարցին, նշել է, որ «*նիստը դռնփակ անցկացնելու որոշում կայացնելիս խորհուրդը, կարևորելով գործի քննության հրապարակայնության սկզբունքը, որը թե՛ Սահմանադրության, թե՛ միջազգային իրավական ակտերի, թե՛ դատավարական օրենսդրության շրջանակներում դատավարական իրավունքների իրացման կարևորագույն և անխախտելի սկզբունք է, քննարկել է դատական վարույթի մի մասը դռնփակ անցկացնելու հնարավորությունը*:

Մինչդեռ, դատական վարույթի ընթացքում Դատավորի և նրա որոշ ներկայացուցիչների վարքագիծը առավել քան մտահոգիչ էր և ուղղակիորեն միտված էր դատական իշխանության հեղինակազրկմանը և վարկաբեկմանը: Արդարադատության շահի պաշտպանության անհրաժեշտությունը պայմանավորված էր ոչ միայն Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարանների և դատավորների անկախության երաշխավորի, այլ նաև հանրության ընկալման առումով դատավորի՝ որպես հավաքական կերպարի ու դատավորի բարձր պաշտոնի կարևորության համատեքստում: Դատավորի, ինչպես նաև նրա որոշ ներկայացուցիչների կողմից ոչ միայն չեն պահպանվել վարքագծի կանոնները, այլև որոշ դեպքերում վերջիններիս գործողություններն այնպիսի դրսևորումներ են ունեցել, որ անընդունելի են հասարակության մեջ և չեն համապատասխանում անգամ սոցիալական նորմերի կանոններին, որի արդյունքում նիստը նախագահողը բազմաթիվ անգամ ստիպված է եղել հիշեցնել Օրենսգրքով սահմանված դատական սանկցիա կիրառելու հնարավորության մասին, իսկ որոշ դեպքերում խորհուրդը ստիպված է եղել կիրառել դրանք»⁴²:

⁴⁰ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-1-Ո-Կ-3 որոշում:

⁴¹ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-57-Ո-Կ-16 որոշում:

⁴² Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-57-Ո-Կ-16 որոշում:

Չաշվի առնելով գործի հնչեղությունն ու բարձրացված հարցերի կարևորությունը՝ կարծում ենք, որ նման գործերը դռնբաց անցկացնելը ինքնին կարևոր է հանրության համար: Իսկ դռնփակ անցկացնելու վերաբերյալ որոշումները պետք է լինեն առավել հիմնավոր, հակառակ պարագայում խորացնում են հարուցված վարույթի և դրա քննության օրինականության վերաբերյալ կասկածները:

Դռնբաց անցկացված վարույթների մեծ մասը՝ թվով 8, հեռարձակվել է նաև Բարձրագույն դատական խորհրդի կողմից:

Նիստերի հեռարձակման առնչությամբ պետք է արձանագրել, որ ինչպես պարզ է դարձել ուսումնասիրության իրականացման ընթացքից, կարգապահական պատասխանատվության գործերով վարույթների նիստերը մարտ ամսից սկսած Բարձրագույն դատական խորհրդի կողմից այլևս չեն հեռարձակվել և այնուհետ չեն տեղադրվել Դատական իշխանության պաշտոնական կայքում (օրինակ՝ մայիսի 29-ին կայացած երկու կարգապահական վարույթներ և հունիսի 1-ի մեկ կարգապահական վարույթ): Կազմակերպությունը դիմել է Խորհրդին՝ պարզելու, թե ինչով է պայմանավորված նիստերը չհեռարձակելը⁴³: Ի պատասխան Կազմակերպության գրության՝ Բարձրագույն դատական խորհրդից տեղեկացրել են, որ համաձայն ԲԴԽ-68-Ն-15 որոշման 25-րդ գլխի 179-րդ կետում նշվում է դռնբաց դատական նիստերի լուսաբանման հնարավորության և ոչ թե պարտադիր լինելու մասին⁴⁴:

Նմանապես, 3 գործերով Խորհրդի որոշման հրապարակման ժամանակ ոչ դիտորդները, ոչ լրագրողները չեն թույլատրվել ներկա գտնվել նիստերի դահլիճում, այլ ուղղորդվել են առանձին սենյակ, որտեղից հետևել են որոշման հրապարակմանը, մինչդեռ վերջնական դատական ակտերը ենթակա են հրապարակման դռնբաց նիստում⁴⁵:

Չետաքրքիր պատկեր է դուրս բերվել գործերի առնչությամբ զանգվածային լրատվության միջոցների ներկայության և հետաքրքրվածության մասով: Մասնավորապես, զանգվածային լրատվության միջոցների ներկայությունը եղել է 14 գործերից չորսով, որոնց մեջ վարույթներին ներգրավված դատավորները մինչև վարույթի հարուցումը նույնպես եղել են լրագրողների ուշադրության

⁴³ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպություն, գրություն Ե87-14.06.2023:

⁴⁴ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ դատական դեպարտամենտի ղեկավար, N ԴԴ-1-Ե-4756:

⁴⁵ Դատավոր Դավիթ Չարությունյանի գործով որոշման հրապարակումը ԲԴԽ-ում, հասանելի է հետևյալ հղումով՝ https://factor.am/663722.html?fbclid=IwAR2gKyHuWGDYS5dLIRvH-k4zw4xqzE-lIlgkYJqiFaRe_jTr9E-ty3CJrrQU

կենտրոնում⁴⁶: Այդ գործերից երկուսը կապված են եղել դատավորների կողմից Բարձրագույն դատական խորհրդի որոշումների վերաբերյալ հրապարակային կարծիք արտահայտելու հետ: Մյուս երկու գործերը վերաբերել են ՄԻԵԴ որոշումներով հայտնաբերված խախտման հիման վրա հարուցված վարույթներին⁴⁷: Նշված գործերով դատավորների լիազորությունները խորհրդի որոշմամբ դադարեցվել են:

Նիստերի հեռարձակումը և հետագայում նաև պաշտոնական կայքով տարածումը վարույթների և ողջ գործընթացի թափանցիկությունն ու հրապարակայնությունը ապահովող կարևոր քայլ է եղել, մինչդեռ նման պրակտիկան վերացնելը կարելի է համարել հետընթաց:

3. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 14 գործից 9-ով Բարձրագույն դատական խորհրդի կողմից վարույթի ավարտին կայացվել է դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում, 5 գործով՝ պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժվել է: 9 գործից մեկով պատասխանատվության ենթարկվել են 4 դատավորից երեքը, քանի որ վարույթին ներգրավված 4 դատավորից մեկը հրաժարական է ներկայացրել, ում մասով վարույթը կարճվել է:

Աղյուսակ 3: Կարգապահական վարույթների արդյունքում կայացված ԲԴԽ որոշումները.

Կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին	9
Կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու մասին	5

Մերժված 5 վարույթներից 4-ի հիմքում դրվել է Դատական օրենսգրքի 142-րդ հոդվածի երկրորդ մասը: Մասնավորապես, վարույթ հարուցող մարմնի միջնորդության մերժումը հիմնավորվել է նրանով, որ թեև արարքը ձևականորեն

⁴⁶ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-20-Ո-Կ-9, ԲԴԽ-57-Ո-Կ-16 որոշումներ:

⁴⁷ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-57-Ո-Կ-17, ԲԴԽ-1-Ո-Կ-4 որոշումներ:

պարունակում է օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով կասկածի տակ չի դնում տվյալ դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր էությանմբ չի կարող հեղինակագրվել դատական իշխանությունը⁴⁸:

Արարքը նվազ կարևորության գնահատված գործերից մեկով խորհուրդը գտել է, որ դատավորի կողմից կայացվել է «Բողոքի քննությունը վերսկսելու մասին որոշում», որի մեջ սուս կրավական հիմքի վկայակոչումն ու որպես գործի վարույթի վերսկսելու հիմնավորում նշվածը բովանդակությամբ և նշանակությամբ չի կարող վկայել դատական ակտի լիարժեք պատճառաբանված լինելու մասին, սակայն տվյալ դեպքում հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննարկվող դատական ակտը կայացվել է բողոքի առավել բազմակողմանի քննությունն ապահովելու նկատառումներից ելնելով, իսկ դրա հիմնավորված և պատճառաբանված չլինելը չի բացառել դատավարության մասնակիցների իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության հնարավորությունը: Տվյալ դեպքում դատավորի կողմից թույլ է տրվել դատավարական իրավունքի նորմի ամերևույթ խախտում, որը ձևականորեն պարունակում է օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ, սակայն ունի նվազ կարևորություն⁴⁹:

Մեկ այլ գործով խորհուրդը հաստատել է դատավորի կողմից դատավարական ժամկետները խախտելու հանգամանքը (դատավորի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշման, հայցադիմումի և կից փաստաթղթերի պատճենների ստացման հետ կապված հայցադիմումի պատասխանի ներկայացման ժամկետի հաշվարկ, ինչն իր հերթին կապված է նախնական դատական նիստ նշանակելու ժամկետը հաշվարկելու հետ, և դատավորի կողմից փաստաթղթերն օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ուղարկելը): Մինևույն ժամանակ, սակայն, խորհուրդը գտել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ, ըստ էության, տվյալ դեպքում դատավարության մասնակիցների համար որևէ բացասական իրավական հետևանք չի առաջացել, չի բացառվել մասնակիցների իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության հնարավորությունը, դատավորի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմի խախտումը ձևականորեն պարունակում է օրենսգրքով սահմանված դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ, սակայն ունի նվազ կարևորություն, ինչի

⁴⁸ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-1-Ո-Կ-5, ԲԴԽ-1-Ո-Կ-1, ԲԴԽ-48-Ո-Կ-14, ԲԴԽ-48-Ո-Կ-15 որոշումներ:

⁴⁹ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-1-Ո-Կ-1 որոշում:

պատճառով կասկածի տակ չի դնում դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին⁵⁰:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ հինգերորդ որոշմամբ, հիմք ընդունելով Դատական օրենսգրքի համապատասխան կարգավորումները⁵¹, Խորհուրդը մերժել է ներկայացված միջնորդությունը մեղքի բացակայության հիմքով⁵²: Խորհուրդը, մասնավորապես, եզրահանգել է, որ գնահատելով կարգապահական վարույթի նյութերը, միջնորդության հիմքերը և հիմնավորումները՝ քրեադատավարական վարույթում համապատասխան խափանման միջոցի ընտրության կամ փոփոխության հարցերը պետք է քննարկման առարկա դարձվեն հիմք ընդունելով համապատասխան դատական գործի փաստերը, նյութերը, որի արդյունքում կայացվի կալանքը որպես խափանման միջոց ընտրելու որոշումը կամ այն գրավով փոխարինելու կամ համապատասխան միջնորդությունը մերժելու վերաբերյալ: Վերոգրյալի հաշվառմամբ Խորհուրդը արձանագրել է, որ տվյալ դեպքում Դատավորի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի որևէ խախտում թույլ չի տրվել, ավելին կարգապահական վարույթի շրջանակներում, վարույթ հարուցող մարմինը չի ներկայացրել որևէ հիմնավորում՝ ենթադրյալ արարքը Դատավորի կողմից դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ կատարված լինելու վերաբերյալ:

3.1 ԲԴԽ որոշման հիմնավորվածությունը

Բարձրագույն դատական խորհրդի որոշումներին ներկայացվող կարևորագույն պահանջներից մեկը դրանց հիմնավորվածությունն է, ինչը ենթադրում է ինչպես արարքը կարգապահական խախտում որակելուն, այնպես էլ խախտման բնույթի նկարագրությանն ու ընտրված կարգապահական պատասխանատվության միջոցի համաչափությանը:

Այս առումով ուսումնասիրված բոլոր գործերով Խորհուրդը որոշմամբ անդրադարձել է մեղքի առկայությանը և դրսևորված մեղքի տեսակին: Մեկ վարույթով մեկից ավելի դատավորների մասնակցության պարագայում որոշմամբ մեղքի ձևին անդրադարձ կատարվել է յուրաքանչյուր դատավորի մասով առանձին-առանձին:

⁵⁰ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-1-Ո-Կ-5 որոշում:

⁵¹ ՀՀ դատական օրենսգրք, հոդված 142, մաս 10:

⁵² Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-1-Ո-Կ-6 որոշում:

Մեկ գործով խորհուրդը մեղքի տեսակին չի անդրադարձել, քանի որ արձանագրվել է խախտման բացակայություն⁵³:

Բոլոր այն դեպքերում, երբ խորհրդում քննության ընթացքում դատավորի կողմից ներկայացվել է բացատրություն, ապա այն ներառվել է խորհրդի որոշման մեջ: Պետք է նշել, որ բոլոր գործերով դատավորների կողմից ներկայացվել են բացատրություն՝ ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր: Այն դեպքում, երբ խորհրդին չի ներկայացվել առանձին պատասխան, որպես պատասխան հաշվի է առնվել վարույթ հարուցող մարմնին ներկայացված պատասխանը և խորհրդում կայացած նիստի ընթացքում հնչեցված բանավոր պատասխանները:

խորհրդի կողմից կայացվող որոշումների հիմքում են դրվել և օգտագործվել նաև վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները: Դրանց մեջ գերակշռող են եղել վարույթին կողմերի կողմից ներկայացվող միջնորդություններին կից փաստաթղթերն ու դատական գործով կայացված որոշումները:

14 գործերով պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 9 որոշումներից 7-ի պարագայում խորհուրդը խախտումը որակել է կոպիտ անփութությամբ կատարված, այդ թվում՝ մի քանի դատավորի ներգրավվածության գործով բոլոր դատավորների պարագայում, 2 դեպքում՝ դիտավորությամբ կատարված՝ հրապարակային կարծիքի արտահայտման հիմքով հարուցված գործերով:

Մեկ դեպքում խորհուրդը դիտավորությունը հիմնավորել է նրանով, որ դատավորի կողմից խոսքի ազատության իրավունքի իրացման պայմաններում դատավորի վարքագծի կանոններով սահմանված առավել խիստ սահմանափակումները կանխատեսելի են եղել Դատավորի համար: Դատավորը կասկածի տակ է դրել որպես դատարան հանդես եկած Բարձրագույն դատական խորհրդի որոշումն այն դեպքում, երբ խորհրդի որոշման ամբողջական տեքստը դեռևս հրապարակված և հասանելի չի եղել և, առանց որոշման հիմնավորումները կարդալու այն կասկածի տակ դնելը թույլ է տալիս ողջամտորեն եզրահանգել Դատավորի գործողություններում դիտավորության առկայության մասին⁵⁴:

Մյուս դեպքում խորհուրդը արձանագրել է, որ դատավորի կողմից խոսքի ազատության իրավունքի իրացման պայմաններում դատավորի վարքագծի կանոններով սահմանված առավել խիստ սահմանափակումները կանխատեսելի են եղել Դատավորի համար: Ըստ խորհրդի՝ Դատավորի կողմից խորհրդի որոշումների օրինականությունն ու որոշումների կայացման ընթացքում խորհրդի անդամների անկախությունը և անաչառությունը կասկածի տակ առնելու հանգամանքները թույլ են տալիս ողջամտորեն եզրահանգել Դատավորի

⁵³ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-1-Ո-Կ-6 որոշում:

⁵⁴ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-20-Ո-Կ-9 որոշում:

գործողություններում դիտավորության առկայության մասին: Ավելին, վերը նշված հիմնավորումների լույսի ներքո արձանագրված խախտումներն այնքան ակնհայտ էին, որ Դատավորը չէր կարող չզգիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, մասնավորապես, Խորհրդի կարգապահական խախտման հիմքով դատավորների լիազորությունները դադարեցնելու մասին որոշումների մի մասը անօրինական համարելը, Խորհրդի անդամների անկախության և անաչառության մասին կասկածներ արտահայտելը: Այսպիսով, Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ մատնանշված դրվագներով խոսքի ազատության իրավունքի սահմանազանցումը ողջամիտ կասկածից վեր է, հետևաբար, այն չէր կարող դրսևորվել որևէ այլ կերպ, քան դիտավորությունն է⁵⁵:

4 գործերով⁵⁶ Խորհուրդը եզրահանգել է, որ թեև արարքը ձևականորեն պարունակում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով կասկածի տակ չի դնում տվյալ դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր ելությամբ չի կարող հեղինակագրվել դատական իշխանությունը: Հետևաբար, կարգապահական խախտում չի հանդիսանում⁵⁷: Նվազ կարևորությամբ որակված գործերից 3-ի պարագայում Խորհուրդը մեղքի ձևին չի անդրադարձել, մեկի դեպքում անդրադարձել է⁵⁸:

Մասնավորապես, Խորհրդի գնահատմամբ՝ Դատավորի կողմից կայացված որոշման մեջ իրավական հիմքի վկայակոչումը և որպես գործի վարույթը վերսկսելու հիմնավորում նշվածը իրենց բովանդակությամբ և նշանակությամբ չեն կարող վկայել դատական ակտի լիարժեք պատճառաբանված լինելու մասին, սակայն տվյալ դեպքում հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննարկվող դատական ակտը կայացվել է բողոքի առավել բազմակողմանի քննությունն ապահովելու նկատառումներից ելնելով, իսկ դրա հիմնավորված և պատճառաբանված չլինելը չի բացառել դատավարության մասնակիցների իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության հնարավորությունը, Խորհուրդը գտնում է, որ Դատավորի կողմից թույլ է տրվել դատավարական իրավունքի նորմի առերևույթ խախտում, որը ձևականորեն պարունակում է Օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ, սակայն ունի նվազ կարևորություն, ինչի պատճառով կասկածի տակ չի դնում Դատավորի

⁵⁵ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-57-Ո-Կ-16 որոշում:

⁵⁶ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-1-Ո-Կ-1, ԲԴԽ-48-Ո-Կ-14, ԲԴԽ-Ո-Կ-13, ԲԴԽ-48-Ո-Կ-15 որոշումներ:

⁵⁷ ՀՀ դատական օրենսգիրք, հոդված 142, մաս 2:

⁵⁸ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-48-Ո-Կ-14 որոշում

համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր ելույթամբ չի կարող հեղինակագրվել դատական իշխանությունը⁵⁹:

Մեկ այլ դեպքում Խորհուրդը, հիմք ընդունելով ուսումնասիրված նյութերը, գտել է, որ Դատարանի կողմից 25.07.2022 թվականին հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը մասնակի բավարարելու պահից մինչև որոշման հիման վրա կազմված կատարողական թերթը 23.09.2022 թվականին դատական ակտերի հարկադիր կատարման համապատասխան տարածքային ստորաբաժանում մուտքագրվելու պահը, 2020թ. ապրիլի 16-ին ծնված Գ.Կ.-ն Հայաստանի Հանրապետության սահմանը չի հատել, ինչը, ի թիվս վերոնշյալ փաստերի, Խորհուրդին բավարար հիմք է տալիս արձանագրելու, որ սույն որոշման շրջանակներում քննարկման առարկա հանդիսացող դատավարական ժամկետի խախտումը թեև ձևականորեն պարունակում է Օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ, սակայն ունի նվազ կարևորություն, ինչը կասկածի տակ չի դնում Դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր ելույթամբ չի կարող հեղինակագրվել դատական իշխանությունը⁶⁰:

Դատավարական ժամկետների, այն է դատավարական փաստաթղթերը օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ուղարկելն ու նախնական դատական նիստի նշանակումն ուշացնելը, խախտման առնչությամբ մեկ այլ գործով Խորհուրդը գտել է, որ Դատավորի կողմից թույլ է տրվել գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջի խախտում, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ըստ ելույթի տվյալ դեպքում այդ կերպ դատավարության մասնակիցների համար որևէ բացասական իրավական հետևանք չի առաջացրել, չի բացառել դատավարության մասնակիցների իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության հնարավորությունը, Խորհուրդը գտել է, որ Դատավորի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմի առերևույթ խախտումը ձևականորեն պարունակում է Օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ, սակայն ունի նվազ կարևորություն, ինչի պատճառով կասկածի տակ չի դնում Դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր ելույթամբ չի կարող հեղինակագրվել դատական իշխանությունը⁶¹:

Այսինքն, տվյալ պարագայում հիմք է ընդունվել նաև այն հանգամանքը, որ խախտումը բացասական իրավական հետևանք չի առաջացրել:

⁵⁹ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-1-Ո-Կ-1 որոշում:

⁶⁰ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-48-Ո-Կ-15 որոշում:

⁶¹ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-1-Ո-Կ-5 որոշում:

Դատավարական ժամկետների խախտման հիմքով (աշխատանքային վեճով գործի քննությունը և լուծումն օրենքով սահմանված ժամկետից ավելի քան 1 տարի 8 ամիս անց իրականացնելը, օրենքով սահմանված ժամկետից ավելի քան 1 տարի անց վճիռը հրապարակելը և դրա օրինակը դատավարության կողմերին տրամադրելը) հարուցված գործերից մեկով խախտումը որակվել է կոպիտ անփութությամբ կատարված: Խորհուրդը, մասնավորապես, նշել է, որ Դատավորն իրեն վերագրվող խախտումները կատարել է կոպիտ անփութությամբ, քանի որ չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել, այնքանով, որքանով չեն հիմնավորվել քաղաքացիադատավարական նորմով սահմանված ժամկետի խախտումները՝ որևէ իրավաչափ նպատակով: Դատարանի նման վարքագծի դրսևորումը կարող է ողջամիտ կասկած հարուցել նաև Դատարանի անկախության ու անաչառության նկատմամբ, դրանով իսկ նվազեցնելով հանրության վստահությունը դատական իշխանության նկատմամբ⁶²:

Արարքը որակելիս և խախտման փաստը հիմնավորելիս Խորհրդի որոշումներում վկայակոչվել են նաև ներպետական և միջազգային իրավական կարգավորումներ:

Մասնավորապես, ուսումնասիրված բոլոր դեպքերում որոշումը հղում է կատարել ՀՀ դատական օրենսգրքի կարգավորումներին, 13 վարույթով որոշմամբ հղում է կատարվել նաև ՀՀ Սահմանադրությանը, 11 դեպքով՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիային ու դատարանի նախադեպերին: 8 վարույթով կայացված որոշում հղում է կատարել նաև ԲԴԽ կողմից նախկինում կայացված որոշումներին, 6 վարույթով համապատասխանաբար Վճռաբեկ դատարանի նախադեպերին ու համապատասխան ոլորտային օրենքներին: 4-ական գործով Խորհուրդը մեջբերել է նաև միջազգային Կոնվենցիաներ ու Կառավարության վերաբերելի որոշումներ: Հիշատակված միջազգային կարգավորումների մեջ տեղ են գտել հատկապես ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/32 և 1985 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 40/46 բանաձևերով հաստատված՝ «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքները» և դրա հավելված՝ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից թիվ 2200A (XXI) բանաձևով հաստատված «Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքները», «Դատավորների կարգավիճակի մասին» 1998 թվականի հուլիսի 10-ի Եվրոպական խարտիան և Եվրոպական խարտիայի պարզաբանման հուշագիրը, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2010 թվականի նոյեմբերի 17-ի՝ «Դատավորների անկախության, գործունեության արդյունավետության և պատասխանատվության մասին» թիվ CM/Rec(2010) 12 հանձնարարականը, Եվրոպական Դատավորների

⁶² Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-20-Ո-Կ-7 որոշում:

Խորհրդատվական խորհրդի և Վենետիկի հանձնաժողովի մի շարք եզրակացություններ:

3.2 Կիրառված կարգապահական տույժի տեսակները

Ինչպես արդեն նշվեց՝ ուսումնասիրված 14 գործերից 9-ի պարագայում Խորհրդի կողմից որոշում է կայացվել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին, որից 5-ի պարագայում էական կարգապահական խախտման հիմքով 7 դատավորների լիազորությունները դադարել են: Նշյալ 5 գործերից երկուսը վերաբերում են դատավորի կողմից հրապարակային կարծիք արտահայտելու հիմքով հարուցված վարույթներին, 2-ը՝ ՄԻԵԴ որոշմամբ հայտնաբերված խախտման հիման վրա հարուցված վարույթներին և մեկը երեխայի որդեգրման գործով թույլ տված խախտման հիմքով հարուցված վարույթին:

Վերը նշված վարույթներից մեկը վերաբերել է 4 դատավորների, որի շրջանակներում 3 դատավորի լիազորություններ դադարեցվել են, չորրորդի կողմից մինչև ԲԴԽ որոշման կայացումը ներկայացվել է պաշտոնից հրաժարականի դիմում: Այս մասով վարույթը կարճվել է: Հարկ է նշել նաև, որ ՄԻԵԴ որոշմամբ հայտնաբերված խախտման հիման վրա հարուցված վարույթներով Խորհուրդը դատավորների լիազորությունները դադարեցրել է էական կարգապահական խախտման հիմքով, որտեղ խախտումը բնութագրվել է որպես կոպիտ անփութությամբ կատարված:

3 գործով դատավորի նկատմամբ Խորհուրդը ընտրել է նկատողություն կարգապահական պատասխանատվության տեսակը, ընդ որում երեք գործից երկուսի պարագայում Խորհուրդը պատասխանատվության տեսակը ընտրելիս նշել է կարգապահական պատասխանատվության հարցի քննության պահին կարգապահական տույժ չունենալու հանգամանքը⁶³, մեկ դեպքում նշվել է, որ դատավորի վերաբերյալ նախկինում հարուցված է եղել ևս մեկ կարգապահական վարույթ, որի շրջանակներում վերջինս ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ ստանալով նկատողություն, որը մարված չէ: Վերոնշյալ երեք գործերում ամկա տարբերությունների պայմաններում այլ հիմնավորում չի ներկայացվել, թե ինչու է ընտրվել նկատողություն տույժի տեսակը:


Մեկ գործով Խորհուրդը ընտրել է նախազգուշացում տույժի տեսակը: Տվյալ գործով Խորհուրդն արձանագրել է, որ դատավորի նկատմամբ կիրառվող

⁶³ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-48-Ո-Կ-13, ԲԴԽ-1-Ո-Կ-2 որոշումներ:

կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս խորհուրդը հաշվի է առնում խախտման բնույթը և հետևանքները, դիտավորությունը կամ կոպիտ անփութությունը, դատավորի անձը, առկա տույժերը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ: Խորհուրդը Դատավորի նկատմամբ կարգապահական տույժի տեսակն ընտրելիս հաշվի է առնում այն հանգամանքը, որ Դատավորի աշխատանքային ծանրաբեռնվածությունը (այդ թվում որպես Դատարանի նախագահի պարտականությունների կատարումը) հանգեցրել է նրան, որ վերջինս հստակ չի վերլուծել և գնահատման չի արժանացրել օրենսդրական իրավակարգավորումները: Խորհուրդն արձանագրում է նաև, որ Դատավորն իր գործունեության ընթացքում երբևէ չի ունեցել որևէ տույժ⁶⁴:

Ուսումնասիրված կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումներից և ոչ մեկով չի հիմնավորվել կոնկրետ տույժի տեսակը ընտրելու և թույլ տված խախտման համաչափության հանգամանքը:

ԲԴԽ որոշումների արդյունքները՝ ըստ դատավորների



⁶⁴Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-20-Ո-Կ-8 որոշում:

3.3 Բարձրագույն դատական խորհրդի անդամի կողմից հատուկ կարծիքի ներկայացում

Ուսումնասիրված 14 գործերով կայացված որոշումներից երկուսի վերաբերյալ խորհրդի անդամների կողմից տրվել է հատուկ կարծիք: Երկու դեպքում էլ հատուկ կարծիքը տրվել է խորհրդի անդամ Արշակ Վարդանյանի կողմից:

Մեկ դեպքում կարծիքը ներկայացվել է ՄԻԵԴ վճռի հիման վրա դատավորների կարգապահական վարույթի շրջանակներում: Խորհրդի անդամի կողմից ներկայացվել է, որ Լիազոր մարմնի միջնորդության մեջ չի ներկայացվել, իսկ եզրափակիչ ակտում խորհրդի կողմից առարկայորեն չի փաստարկվել, թե դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելը և հատկապես նրանց լիազորությունները դադարեցնելն ինչ իրավաչափ նպատակ էր հետապնդում, արդյոք ժողովրդավարական հասարակությունում դա անհրաժեշտ էր: Ավելին, դատաքննությամբ պարզվել է, որ դատավորներին վերագրված իրավախախտման հետևանքով ենթադրաբար տուժած կազմակերպությունը ՄԻԵԴ որոշման կայացումից հետո քաղաքացիական գործը վերանայելու դատավարական ժամկետի ընթացքում նման դիմում չի ներկայացրել, իսկ դատավորների լիազորությունների դադարեցմամբ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված մյուս իրավաչափ նպատակներին հասնելը ողջամտորեն հնարավոր չէ: Եվ վերջապես, դատավորների պաշտոնազրկման հանգեցրած վերոնշյալ միջամտությունը պետք է համահունչ լիներ հետապնդվող նպատակին, բխեր «ծայրահեղ սոցիալական կարիքից», սակայն խորհրդի եզրափակիչ որոշումից հնարավոր չէ եզրակացնել, թե ինչ աստիճանի էր այն կարևոր, որ դատավորների նկատմամբ կիրառելի չէին «ՀՀ դատական օրենսգրք» սահմանադրական օրենքով նախատեսված տույժի նվազ միջամտող, այլընտրանքային տեսակները, կիրառելի էր միջամտության միայն ծայրահեղ, առավել ինտենսիվ միջոցը: Ընտրված ծայրահեղ միջոցի՝ դատավորի լիազորությունների դադարեցման համաչափությունը պահպանելու համար որպես դատարան հանդես եկող խորհուրդը, ում եզրափակիչ որոշումը, գործող իրավակարգավորումների համաձայն, բողոքարկման ենթակա չէ և վերջնական է, պետք է առնվազն դատարանում ապահովել արդար դատաքննության բավարար պայմաններ՝ դատավորներին տրամադրելով Կոնվենցիայի նաև 8-րդ հոդվածով երաշխավորված շահերի նկատմամբ պատշաճ հարգանքի հնարավորություն⁶⁵:

Մյուս դեպքում հատուկ կարծիքը հիմնվել է այն հանգամանքի վրա, որ դատավորը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 7-

⁶⁵ Բարձրագույն դատական խորհուրդ ԲԴԽ-57-Ո-Կ-17 որոշում:

որ մասով նախատեսված նորմի խախտում, այն է՝ Դատարանի՝ եզրափակիչ դատական ակտը դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով ժամանակին չի հրապարակել, սակայն մինչև 2023 թվականի փետրվար ամիսը վճիռը չստանալու մասին Հայցվորի կողմից չբարձրաձայնելու (Դատավորի աշխատակազմից չպահանջելու), հակառակն հաստատող փաստական տվյալների բացակայության, վճռի օրինակը կողմերին ուղարկելու նպատակով դատարանի գրասենյակ հանձնված և փոստով ուղարկված լինելու իր պարտականությունը պատշաճ կատարելու վերաբերյալ դատավորի կողմից գիտակցելու (առնվազն բարեխիղճ մոլորության մեջ գտնվելու) պայմաններում դատավարական վերոնշյալ նորմի խախտումը ձևականորեն է պարունակում սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի՝ վարքագծի կանոնի խախտման հատկանիշներ: Դատավարական վերոնշյալ նորմի խախտումն իր էությամբ դատական իշխանությունը չի հեղինակագրվել և ունի նվազ կարևորության, որի պայմաններում դատավորը կարգապահական պատասխանատվության չպետք է ենթարկվեր⁶⁶:

ԵԶՐԱՅԱՆԳՈՒՄՆԵՐ

- Շարունակում է չհիմնավորված և մինևսույն ժամանակ մտահոգիչ մնալ ինչպես Արդարադատության նախարարության կողմից հարուցվող վարույթների թվի աճը, այնպես էլ Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կողմից հարուցվող քիչ վարույթների թիվը:
- Հաշվի առնելով վարույթի հարուցման փուլի ոչ թափանցիկ լինելը՝ շարունակում են անհստակ մնալ հարուցված վարույթների ընտրության չափանիշները: Այս առումով խնդրահարույց է հատկապես դատավարական ժամկետների խախտման հիմքով վարույթների հարուցումը, մասնավորապես, թե ինչպես են նման հիմքով վարույթները հարուցվում, ինչ չափանիշների և սկզբունքների հիման վրա:
- Դատավարական ժամկետների խախտման գործերով հստակ չէ նաև, թե մեղքի ձևի որակումը ինչ հանգամանքների հաշվի առնմամբ է որոշվում՝ ինչպես վարույթ հարուցող մարմնի, այնպես էլ խորհրդի կողմից:
- Վարույթ հարուցող մարմնի կողմից միջնորդության առնչությամբ ներկայացված հիմնավորումներն ու արարքի որակումները շարունակում են մնալ ոչ հրապարակային: Տեղեկությանը հնարավոր է ծանոթանալ բացառապես խորհրդի վերջնական որոշման անդրադարձով, ինչը բավարար չէ:

⁶⁶ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-48-Ո-Կ-13 որոշում:

- Վարույթ հարուցող մարմնի կողմից հարուցման համար նախատեսված ժամկետների առնչությամբ առանձին դեպքում արձանագրվել է դատավորի վարքագծի կանոնների խախտման հիմքով կարգապահական պատասխանատվության ենթարկելու ժամկետը լրացած լինելու հարցի բարձրացում դատավորի կողմից, ինչը սակայն խորհրդի կողմից բավարար հիմնավորում չի ստացել:
- Ինչպես պարզ է դարձել նիստերի մշտադիտարկումից, եղել են դեպքեր, երբ նշանակված նիստը հետաձգվել է առանց նիստը սահմանված կարգով բացելու: Նման դեպքերը, սակայն, որևէ հիմնավորում և բացատրություն չեն ստացել:
- Խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վարույթների նիստերի հեռարձակման և դատական իշխանության պաշտոնական կայքում տեղադրման դադարեցումը խնդրահարույց է և հրապարակայնության տեսանկյունից հետընթաց:
- Խնդրահարույց է արձանագրված երեք վարույթներով խորհրդի կողմից կայացված որոշման հրապարակման ժամանակ դիտորդների և լրագրողների ներկայության արգելքը նիստերի դահլիճում, այն դեպքում, երբ վարույթը եղել է դռնբաց:
- Ուսումնասիրված գործերից պարզ չէ, թե նվազ կարևորության հիմքով մերժված որոշումների պարագայում որ դեպքում և ինչ սկզբունքով է անդրադարձ կատարվում մեղքի ձևի որակմանը:
- Ուսումնասիրված գործերի մեջ խնդրահարույց են շարունակում համարվել ՄԻԵԴ խախտման հիմքով հարուցված վարույթները, որոնց պարագայում խնդիրը կապված է հետադարձության սկզբունքի խախտման և անձի վիճակը վատթարացնող նորմը դատավորի նկատմամբ կիրառելու հետ:
- Խիստ խնդրահարույց է շարունակում մնալ խորհրդի կողմից դատավորին վերագրվող խախտման համար ընտրվող պատասխանատվության միջոցի համաչափության հարցը, որը որոշումներով բավարար հիմնավորում չի ստացել:
- Վերոնշյալի առնչությամբ առավել մտահոգիչ են եղել դատավորների կողմից հրապարակային կարծիք արտահայտելու հիմքով հարուցված վարույթներով կայացված պատասխանատվության միջոցները, այն է՝ լիազորությունների դադարեցումը, որոնք համաչափության տեսանկյունից խնդրահարույց են:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Օրենսդրական հիմքեր նախատեսել վարույթ հարուցող մարմնի կողմից կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունները ամբողջությամբ հրապարակային դարձնելու առնչությամբ:
- Վարույթ հարուցող մարմնի կողմից ցուցաբերել միատեսակ մոտեցում դատավարական ժամկետների խախտման հիմքով դատավորների նկատմամբ հարուցվող վարույթների առնչությամբ:
- Հստակեցնել և որոշակիացնել ինչպես վարույթ հարուցող մարմնի, այնպես էլ Խորհրդի կողմից մեղքի ձևի որակման չափանիշները:
- Խորհրդի կողմից կայացվող որոշումներով հստակ հիմնավորումներ և բացատրություններ տրամադրել նախատեսված ժամկետի խախտմամբ վարույթի հարուցման դեպքերին:
- Ձևավորել այնպիսի պրակտիկա, որ ցանկացած դեպքում, երբ Խորհրդում նշանակված նիստը հետաձգվում է, նշանակված նիստը օրենքով սահմանված կարգով բացվի և որոշում կայացվի հետաձգման մասին:
- Օրենսդրական կարգավորում տալ Խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության գործերով վարույթների նիստերի պարտադիր հեռարձակմանն ու տեսագրությունները Դատական իշխանության պաշտոնական կայքում տեղադրելուն:
- Բացառել դռնբաց դատական նիստերով դիտորդների և լրագրողների՝ նիստերի դահլիճում գտնվելը արգելող դրսեւորումները:
- Խորհրդի որոշումներով մանրամասն հիմնավորել ընտրված կարգապահական պատասխանատվության տեսակն ու դրա համաչափությունը թույլ տրված խախտմանը:
- Բացառել դատավորների հրապարակային կարծիքի հայտնման դեպքում և հիմքով կարգապահական վարույթի հարուցումը և պատասխանատվության ենթարկելը: